Տեղեկագիր Կովկասի
հայոց բարեգործական
ընկերության 1911 թ.
գործունեության։

Լեռ
945

1999

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԻ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1911 Թ.

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Լեռ
945

ԹԻՖԼԻՍ
Տպարան „Կուլտուրա" Բարձնակայա, 14.
1912

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԻ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1911 Թ.

Լէօի գրադարան

501

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ - Арм. ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան „Կուլտուրա" Բարոնսկայա, 14.
1912

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՒ ՆՐԱ 1911 Թ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ։

Դեկտեմբերի 17-ին ընկերութեանս յօբելեանական ընդհանուր ժողովում միաձայն պատուաւոր անդամ ընտրուեցին երկրիս Փոխարքայ ԿՈՄՍ ԻԼԱՐԻՕՆ ԻՎԱՆՈՎԻՉ ՎԱՐԱՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԸ և նրա ամուսին ԿՈՄՍՈՒՀԻ ԵԼԻԶԱՒԵՏԱ ԱՆԴՐԷԵՒՆԱ ՎԱՐԱՆՑՈՎԱ-ԴԱՇԿՈՎԱՆ։

Խորհրդի կազմը 1911 թ. յունվարի 1-ին հետևեալն էր. Նախագահ Խորհրդի՝ Սամսոն Յարութիւնեան, փոխ նախագահներ՝ Յովհաննէս Սպենդիարեան և Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեան, գանձապահ՝ Առաքել Սարուխանեան, քարտուղար՝ Յակովբ Տաննազարեան, Խորհրդի անդամներ՝ տիկին Հեղինէ Առստամեան, բժ. Բոգդան Աղասարեան, Սահակ Լիսիցեան, Սարգիս Մելքումեան, Զաքար Մամուլեան, բժ. Արամ Մխիթարեան, Աղէքսանդր Տահիկեան. փոխանդամներ՝ Կարապետ Տիրինեան, Երուանդ Լալայեան և Արտաշէս Սէյլանեան։ 1911 թ. յունիսի 4-ին կայացած ընդհանուր ժողովում, հերթով դուրս գնացող Սամսոն Յարութիւնեանի, Յակովբ Տաննազարեանի, տիկ. Հ. Առստամեանի և Առ. Սարուխանեանի տեղ ընդհանուր ժողովի ցանկութեամբ բաց քուէարկութեամբ ընտրուեցին Խորհրդի անդամներ՝ Սամսոն Յարութիւնեան, իշխանուհի Մարիամ Թումանեան, տիկին Հեղինէ Առստամեան և Յակովբ Տանազարեան։ Փոխ անդամ ընտրուեց Կարապետ Տէրեան։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ վերընտրուեցին՝ Սարգիս Խարազեան, Սիմէօն Տահվերդեան և Առաքել Աւագեան. փոխ անդամներ վերստուգող յանձնաժողովի՝ Մկրտիչ Մաղաքեան և Ջահանգիր Աթայեան։

Խորհուրդը իր առաջին հերթական նիստում, կանոնադրութեան § 31 համաձայն, ընտրեց Խորհրդի պաշտօնատար անձանց, Նախագահ Խորհրդի՝ Սամսոն Յարութիւնեանին, փոխ նախագահներ՝

ՀՖ. 947 Գ 945-ևս

Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեանին և իշխ. Մարիամ Թումանեանին. գանձապահ՝ Զաքարիա Մամուլեանին և քարտուղար՝ Յակովբ Շահնազարեանին։

Հաշուետուական ընթացքում Խորհուրդը ունեցել է 52 նիստ. Խորհրդի անդամների նիստերի յաճախումները արտայայտուել են հետևեալ կերպով.

Ս. Յարութիւնեան 46
Եփրեմ եպիսկոպոս 21
Յ. Սպենդիարեան 13
Իշխ. Մ. Թումանեան 20
Տիկ. Հ. Առստամեան 37
Բժ. Բ. Աղասարեան 38
Ս. Լիսիցեան 28
Ս. Մելքումեան 38
Զ. Մամուլեան 29
Բժ. Ա. Մխիթարեան 25
Յ. Շահնազարեան 41
Ա. Շահիկեան 50
Ա. Սարուխանեան 13

Փոխ անդամներ՝

Կ. Շիրինեան 14
Ա. Սէյլանեան 7
Ե. Լալայեան 10

Թողնելով Խորհրդի ձեռքի տակ եղող իւրաքանչիւր հաստատութեան մանրամասն գործունէութեան զեկուցումն իրանց համապատասխան տեղում անել առանձին վերնագրով, հարկ ենք համարում յայտնել, որ սոյն 1911 թուին ևս Խորհրդիս հոգսերից մէկն է եղել, ինչպէս և առաջներում, չքաւորներին նպաստելու գործը։ Մի կողմից համոզուած լինելով, որ դրամով նպաստելը չքաւորներին աննպատակայարմար է, սակայն միւս կողմից դրամական սուղ միջոցները չեն թոյլ տուել մի ուրիշ ելք գտնել դրա առաջն առնելու, ուստի յակամայից շարունակել է հին ձևի օգնութիւնը, թէ և բաւական սեղմել է դրամով նպաստելու գործը, աշխատելով մեծ մասամբ գործիքներով և այլ նիւթերով օգնել։ Դրամական նպաստներ տուել է մեծ մասամբ իբր ճանապարհածախք, բժշկութեան, հանգուցեալների թաղման և որ գըլ-

խաւորն է ճաշարանում չքաւոր աշակերտ-աշակերտուհիներին ձրի և էժանագին ճաշ մատակարարելով (ներկայիս ճաշում են օրական 300 հոգի)։

Շնորհիւ երկրիս Փոխարքայ ու ընկ. պատուաւոր անդամ Կոմս ՎԱՐԱՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ բարեացակամութեան և Խորհրդի ջանքերի, յաջողուեց ստանալ կառավարութեան համաձայնութիւնը, նրանց մօտ գտնուած յօգուտ գաղթականների հաւաքած 10676 ր. 36 կ. ծախսելու, որ և աստիճանաբար ստացւում է, իւրաքանչիւր անգամ հազարական րուբլի, որի ծախսման մանրամասն հաշիւը ներկայացնելով, տրւում է միւս հազարը։

Այդ գումարով թէ Խորհուրդը և թէ ընկ. սահմանին մօտիկ ճիւղերը հնարաւորութիւն ստացան իրենց դիմող բազմաթիւ գաղթականներին բաւարարութիւն տալ հայրենիք վերադառնալու։

Որբանոցի կեանքի մէջ առանձին փոփոխութիւն չի եղել, որբերը շարունակել են յաճախել տեղիս ծխական դպրոցները, նրանցից միայն մէկը, ինքնակամ, իւր մեծ մօր պատասխանատուութեամբ հեռացել է որբանոցից։

Գրադարան-ընթերցարանի յաճախորդների թիւը օրէցօր աւելանում է, չի կարելի չխոստովանել, որ դրանց մեծ մասը կազմում են մեր դպրոցների աշակերտ-աշակերտուհիները։ Բոլոր ցանկացողներին բաւարարութիւն տալու համար Խորհուրդը գնում է բոլոր նոր հրատարակուած երկերը, ստանում է մեծ թուով տեղական, մայրաքաղաքի և արտասահմանեան թերթեր։ Բացի սովորական ընթերցողներից, կամենալով ընդառաջ գնալ նաև մասնագէտ անձանց ցանկութեանց և գրադարանը աւելի մօտեցնել կենտրոնական մատենադարանի, ուր գտնուեն բոլոր հայ հրատարակութիւնները, նա միջնորդելու է ընդհանուր ժողովի առաջ յատկացնելու հանգուցեալ Աւետիս Վարդապետեանի կտակով ստացուած գումարը գրադարանի համար հայերէն գրքեր գնելու և պահելու հանգուցեալի անուամբ յատուկ բաժանմունք *)։

Ճիւղերի գործունէութիւնը այս տարի աւելի կանոնաւոր է եղել քան անցեալում. թէ և չի կարելի չըշեշտել այն, որ նոյնիսկ հայաշատ մի քանի գաւառական քաղաքներում, շատ քիչ գործունէութիւն են ցոյց տուել, դրանց պատճառը եղել է մասամբ շրջապատող զանազան աննպաստ յանգամանքները և մասամբ էլ, որ աւելի

*) Արդէն ստացուած է 1114 ր. 82 կ.։

հաւանական է, գործի գլուխ եղող անձանց եռանդի պակասութիւնը.
այսպէս օրինակ, Ալէքսանդրապոլի և Նոր-Բայազէտի նման զուտ
հայկական քաղաքներում ճիւղի վարչութիւնները աչքի ընկնող ոչ
մի գործունէութիւն չեն ունեցել, թէև Խորհուրդը մի քանի անգամ
թէ իւր անդամներին և թէ յատուկ լիազօրներ է ուղարկել այն-
տեղերը յորդորելու և գործի հրաւիրելու, սակայն բաւական է
եղել նրանց այնտեղից հեռանալը, որ նրանք դարձեալ մասնաւոր
նոյն անգործունէութեան, էլ չենք յիշում այստեղ Բաթումի, Թու-
թայիսի, Սուխումի և այլն ճիւղերը, ուր աւելի քիչ թւով հայեր
կան։ Սակայն միւս կողմից չի կարելի ուրախութեամբ չշեշտել
միւս ինչպէս մեծ, նոյնպէս և փոքր ճիւղերի եռանդուն և նոյնիսկ
նախանձելի գործունէութիւնները։ Շնորհիւ իրենց վարչութեանց
անդամների եռանդի, այնպիսի գործեր են կատարում, որ արժանի
են շնորհակալութեանց։ Այժմս իւր գործունէութեամբ Ալէքսան-
դրապոլի, Նոր-Բայազէտի, Բաթումի, Քութայիսի ճիւղերին օրի-
նակ կարող է ծառայել, Ջխարի, Ղաթարի, Հաղբութի և այլ
նման նոր բացուած ճիւղերը; որոնք արդէն բաւական գործ են կա-
տարել։ Ահա թէ ինչու Խորհուրդս կարծում է որ մի քանի ճիւղերի
անգործունէութեանց պատճառը գործին գլուխ կանգնածներն են,
որոնք թերևս այլ զբաղմունքներ ունենալով, անկարող են լինում
հարկաւոր ժամանակ գործ դնելու ճիւղի բարւոքման գործին։

Սոյն 1911 թւին ընկերութեանս նոր ճիւղեր են բացուել
Ջալալ-օղլում, Աբասթումանում և Շուլաւերում, որով ընկերու-
թեան բոլոր ճիւղերի թիւը հասել է 47-ի *)։

Ի նկատի ունենալով, որ թէ գոյութիւն ունեցող ճիւղերի
վարչութիւնները և թէ այլ քաղաքներից շարունակ ցանկութիւն էին
յայտնում անդամակցական վճարների պակասեցման մասին, այս տա-
րի, համաձայն ընդհանուր ժողովի որոշման, Խորհուրդը միջնորդել
է կառավարութեան առաջ կանոնադրութեան համապատասխան
յօդուածը փոխելու այս ձևով. անդամակցական վճարը լինի նահան-
գական քաղաքների համար 5 ր. գաւառական քաղաքների համար
3 ր. աւանների և գիւղերի համար 2 ր. որը և յուսով է շուտով
լուծում կստանայ, որով հնարաւորութիւն կտրուի շատ փոքր
քաղաքներում և գիւղերում հիմնելու ընկերութեան ճիւղեր **)։

---

*) Ներկայիս 51-ի է հասել։
**) Արդէն ստացուած է այդ իրաւունքը։

Խորհրդի գլխաւոր հոգսերից մէկը լինելով դպրոցները, նա աշ-
խատել է միջոցներ ձեռք առնել եղածները պահելու և նորերը
բանալու, նպաստել է մի քանի տեղեր միդասեանները դարձնել
երկդասեանների, հետաքրքրութիւն է շարժել հասարակութեան մէջ
և աջակցել դպրոցական շէնքեր շինելուն։

Ընդհանուր ժողովի ցանկութեան համաձայն, Խորհուրդը պէտք
է քննէր դրանց նպաստելու ձևը և տիպը ու յատուկ ընդհ. ժողով
գումարէր այդ հարցի լուծման համար. սակայն ի նկատի ունենալով
որ որոշ փոփոխութիւններ կարելի է կատարել միայն սոյն ուսում-
նական տարուայ վերջից, ուստի և ընդհ. ժողովի գումարումն բար-
ւոք համարեց յետաձգելու մինչև այդ ժամանակ, թէև ինքը այդ առ-
թիւ ունեցել է մի քանի նախապատրաստական ժողովներ։

Որովհետև այս տարի համարեա բոլոր թեմերն ունէին իրենց
տեսուչները, ուստի Խորհուրդը յատուկ տեսուչ չունէր իւր դպ-
րոցների համար, այլ այդ հսկողութիւնը յանձնուած էր նրանց և
գլխաւորապէս տեղական ճիւղերին, իսկ ուր այդպիսիք չկան Խոր-
հրդի անդամներն ու նրա լիազօրներն էին յաճախում և ծանօթա-
նում նրանց հետ։

Այս տարի, բացի եղած նուէրները յօգուտ դպրոցների, ստաց-
ւել է և պ. Գ. Ի. Տէր-Մարգարեանից 1800 ր. յօգուտ Տրվե-
նանց գիւղի, որի հսկողութիւնը նոյնպէս յանձնուած է Խորհրդին,
այդ գումարը, որով պահւում է յիշեալ գիւղում երկդասեան դպրոց,
պ. Տէր-Մարգարեանը խոստացել է ամենայն տարի մուծնելու։

Աւետիս Պօղոսեանի նուիրած հրատարակչական ֆոնդով հրա-
տարակուել են «Ծաղիկներ» մանկական գրքոյկը Յ. Աղաբաբի և
«Գարնանային ջրեր» Տուրգենևի, թարգ. Լ. Դանիէլեանի։

Աբովեան-Նազարեան ֆոնդի գումարով օգտուել են մի քանի
գրականագէտներ, ներկայիս այդ գումարից մնում է չծախսուած
185 ր. 35 կ. Խորհուրդը նպաստները բաժանում է ինքնաբերա-
բար, երբ տեղեկանում է որ այս կամ այն գրականագէտը օգնու-
թեան կարօտ է, առանց սպասելու նրանց անմիջական դիմումին։

Այս տարի Խորհուրդը բացի իւր սովորական աշխատանքից, ու-
նեցել է և մի արտակարգ պարտականութիւն, այն է կազմակեր-
պել ըստ կարելւոյն համապատասխան ընկերութեանս անուան,
նրա երեսնամեայ գործունէութեան յոբելեանը։ Այդ առթիւ նա
կազմել է մի քանի նախապատրաստական խորհրդակցութիւններ

մասնակցութեամբ ընկերութեանս շարքերում գործող անձնաւորութեանց, մշակել է գործունէութեան ծրագիր, տպագրել է ընկերութեան երեսնամեայ պատմութիւնը։ Յօբելեանը ըստ ամենայնի յիշատակելի անելու նպատակաւ, համաձայն ընդհանուր ժողովի որոշման, հիմնուեց դպրոցական-ուսուցչական ֆոնդ, որը և մեծ համակրութեամբ ընդունուեց բոլոր թէ Կովկասի և թէ նրա սահմաններից դուրս գտնուած հայ հասարակութեան բոլոր խաւերում։ Դրա օգտին ժողովարարութեան թոյլտւութիւն ստացուեց ամբողջ Կովկասում, որով ամեն ոք հնարաւորութիւն ունեցաւ մասնակցելու այդ ֆոնդի հիմնուելուն, սկսած հարուստից մինչև վերջին գեղջուկը իրենց լուման ձգեցին այդտեղ և կարճ ժամանակում հաւաքուեց մի պատկառելի գումար։ Հարիւրաւոր պատգամաւորները, շնորհաւորական հեռագիրները և նամակները կենդանի ապացոյց դարձան այն համակրութեան, որ վայելում է Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. համայն հայ հասարակութեան մէջ։ Ի նկատի ունենալով յօբէլեանը տօնելու բարդ ծրագիրը, Խորհուրդը կազմեց մի մասնաժողով, որի մէջ մտան բացի Խորհրդի ամբողջ կազմից, նաև իշխ. Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկը, բժ. Բ. Նաւասարդեան, Միք. Տահպարոնեան, Սեն. Արծրունի, Գ. Սունդուկեան, Ալ. Մէլիք-Ազարեան, Մ. Ի. Դոլուխանեան, (նախագահ յոբ. յանձ.) Աւ. Եզեկեան, Տ. Յովհաննիսեան, Կ. Մ. Ալիխանեան, Ա. Ի. Խատիսեան, Ա. Ն. Միլեան, Վ. Ս. Եղիազարեան, Ս. Գ. Կաֆեան, Խ. Տ. Աֆրիկեան, Ս. Կիւլպէնկեան, Ի. Ս. Ալիխանեան, Վ. Ի. Առաքէլեան, Կ. Սերովբեան, որոնք թէ իրենց խորհուրդներով և թէ անձամբ շրջելով ֆոնդի օգտին յանգանակութիւն անելու, նպաստեցին յօբէլեանի յաջող ընթացք ստանալուն։

Տարուայ ընթացքում մեռել են ընկերութեանս պատուաւոր անդամ յայտնի բարեգործ Ալ. Մանթաշեանը և ընկերութեանս երկարամեայ անդամ և յայտնի մանկավարժ, եռանդուն գործիչ Ղազարոս Աղայեանը, որոնց մահուան սգահանդիսին Խորհուրդը ներկայ է եղել իւր ամբողջ կազմով և դրել է պսակներ։ Վախճանուել է նաև վերաստուգիչ յանձնաժողովի երկարամեայ անդամ Աւետիս Վարդապետեանը, որ մահուան րոպէին անգամ չէր մոռացել ընկերութեանս և իւր համեստ ունեցածից մասն էր հանել և ընկերութեանս համար։

1911 թ. ընթացքում Խորհուրդը ունեցել է մասնաժողովներ

հետեւեալ կազմերով։

1) Ճաշարանի մասնաժողով։

Տիկին Հ. Առստամեան
» Ա. Բագիլ
» Ժ. Զարգարեան
Օրիորդ Գ. Ղազարեան
Տիկին Ե. Ղուլեան
Օրիորդ Հ. Մարկոսեան
» Ե. Պատկանեան
» Ե. Տէր-Գրիգորեան
Օրիորդ Ն. Սերեբրիակեան
Բժ. Բ. Աղասարեան
Պ. Ա. Շահիկեան

2) Որբանոցի մասնաժողով։

Իշխ. Մ. Թումանեան
Բժ. Բ. Աղասարեան
Բժ. Ա. Մխիթարեան

3) Դաստարակն-դպրոց. մասնաժողով։

Եփրեմ Եպիսկոպոս
Ս. Մելքումեան
Յ. Շահնազարեան

4) Դրադարան ընթերցարանի մասնաժողով։

Տիկ. Հ. Առստամեան
Ն. Աբէլեան
Աւ. Բաբախանեան (Լէօ)
Ե. Լալայեան
Յ. Շահնազարեան

5) Կալուածական մասնաժողով։

Ս. Մելքումեան
Ս. Լիսիցեան
Ա. Շահիկեան

6) Ա. Պօղոսեանի հրատարակչական ֆոնդի մասնաժողով։

Իշխ. Մ. Թումանեան
Բժ. Բ. Աղասարեան
Ս. Մելքումեան
Բժ. Ա. Մխիթարեան
Ռ. Խանազադեան
Ա. Քալանթար։

7) Աբովեան Նազարեան ֆոնդի մասնաժողով։

Ա. Բաբախանեան (Լէօ)
Ա. Եզեկեան
Ե. Լալայեան

8) Ֆինանսական մասնաժողով։

Զ. Մամուլեան
Ս. Լիսիցեան
Ա. Սէյլանեան
Ա. Շահիկեան
Կ. Շիրինեան

9) Նպաստամատոյց մասնաժողով։

Ս. Մելքումեան
Ա. Շահիկեան
Յ. Շահնազարեան։

10) Երեկոյթ եւ զբօսանք կազմակերպող մասնաժողով։

Իշխ. Մ. Թումանեան
» Ս. Արղութեան
Տիկին Հ. Առստամեան
» Հ. Աբէլեան
» Մ. Յարութիւնեան
Օրիորդ Ս. Մանդինեան
» Մ. Նազարէթեան
Օրիորդ Մ. Շահիկեան
Պ. Ա. Շահիկեան։

ՃԱՇԱՐԱՆ

(Ընկերութեանս աշակերտական ճաշարանը հիմնուած է 1904 թ.)

Ճաշարանը կազմելով Կ. Հ. Բ. Ը. հիմնարկութիւններից մէկը և, գտնուելով Ընկերութեանս Խորհրդի հսկողութեան ներքոյ, ունի իւր առանձին կառավարութիւնը յանձին ճաշարանական մասնաժողովի, որը բաղկացած է Խորհրդի երկու անդամներից և դրսից հրաւիրուած 8 տիկիններից և օրիորդներից։ Ճաշարանը ունի կառավարչուհի, որի պարտականութիւնն է բերել տալ ճաշարանի համար պաշարեղէն պահանջաթերթերով մասնաժողովի նախագահի ստորագրութեամբ և իւրաքանչիւր օր յանձնել խոհարարին սահմանեալ քանակութեամբ, բաժանել ճաշերը, հսկել ճաշարանի մաքրութեան, կարգ ու կանոնի, գոյքի (инвентарь) և ճաշարանի ծառաների վրայ։ Ճաշերի ժամանակ միշտ ներկայ են լինում մասնաժողովի անդամուհիներից իւրաքանչիւրը հերթով, որոնք նոյնպէս հսկում են կերակուրների թարմ լինելու, համով պատրաստելու և բաժինները կանոնաւոր կերպով բաժանելու վրայ։ Ճաշարանում գտնվում են 2 մատեաններ, որոնցից մէկի մէջ ճաշարան յաճախողները ստորագրում են իրանց ազգանունը և այդպիսով հնարաւորութիւն են տալիս իմանալու օրուայ ճաշողների թիւը, իսկ միւսի մէջ մտցնվում է ճաշարանի ամենօրեայ ծախքը (հաշուելով և ծառայողների օրուայ ռոճիկը) և այդպիսով դուրս է բերվում ամեն մի ճաշի գինը։

Բացի ձրի ճաշողներից տրվում է նաև վճարով ճաշեր ամսական 2 ր. 10 կ.։ Ներկայ 1911 թ. ճաշարանը գործել է յունվարի մէկից մինչև մայիսի 31-ը և սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմ. 31-ը։

Այս ժամանակամիջոցում բաժանուած է 65,358 ճաշ հետևեալ կերպով.

Յունվար ամսին	7,638
Փետրուար »	7,112

Մարտ »	7,335
Ապրիլ »	7,004
Մայիս »	7,332
Սեպտեմբեր »	3,073
Հոկտեմբեր »	8,542
Նոյեմբեր »	8,625
Դեկտեմբեր »	8,727
Ընդամենը	65,358

Ճաշարանից օգտուողները եղել են հետևեալ դպրոցներում սովորողները.

1.	Ներսիսեան դպրոցից	94 հոգի
2.	Յովնանեան »	15 »
3.	Գայիանեան »	15 »
4.	«Լոյս» ընկերութիւնից	20 »
5.	«Մեղու» »	8 »
6.	Մելիք-Բախտամեանի դպրոցից	9 »
7.	Հաւլաբ. ս. Էջմիածնեցւոց	10 »
8.	Քաղաքային դպրոցներից	15 »
9.	Ծամքորեցոց	10 »
10.	Ջգրաշէնի դպրոցից	12 »
11.	Կանանց Հայուհ. Բարեգ. ընկ.	9 »
12.	Թանդոյեան դպ.	10 »
13.	Պուշկինեան I և II քաղ. դպ.	17 »
14.	Կուկիայի Նորաշէնի դպ.	6 »
15.	Ս. Սարգսի դպ.	10 »
16.	Քամոյեան դպ.	7 »
17.	Մանթաշեան առևտր. դպ.	2 »
18.	V գիմնազիայից	1 »
19.	Վերայի քաղ. դպ.	1 »
20.	Երաժշտական	3 »
21.	Սուրբ Կարապ. դպ.	3 »
22.	Գեղարուեստական դպ.	1 »
23.	Կիրակնօրեայ	1 »
24.	Նիկօլայեվսկի դպ.	1 »
	Բոլորը	280 հոգի

Ճաշարանում ճաշում են նաև ընկ. Խուդադեան որբանոցի սանուհիները թւով 32 և ընկ. ծառաները:

Վճարով ճաշում են.

68 հոգի Ներսիսեան դպրոցից (դպրոցի հաշւով):

3 հոգի առևտրական դպ. օր. Ն. Սերեբրեակեանի հաշւով:

10 հոգի իրանց հաշւով:

30 հոգի Թիֆլիզի ժողովարանի հաշւով:

9 հոգու համար 1 ամիս վճարել է պ. Փիրալեանց:

1 հոգու համար 2 ամիս վճարել է օր. Բեանդարեանը:

Վերոյիշեալ թւերից երևում է որ մօտ 160 հոգի ստացել են ձրի ճաշեր:

Միջին թւով իւրաքանչիւր ճաշը նստել է 9,2 կոպէկ: Ճաշերը եղել են տարւա մեջ գլխաւորապէս սուպեր գետնախնձորով, բրնձով, պերլովի կրուպայով, բլղուրով, բորշչ, շչի, փլաւ չրով ու չամիչով, հարիսա, բադու, շիլա—փլաւ, թանէ սպաս, կաթնէ սպաս: Պաս օրերին պասուց սուպեր՝ լոբի, գետնախնձոր ձէթով և փլաւ: Իսկ Զրօրհնեաց և Զատկի տօներին ձուկ, փլաւ, ձու, կալբաս, խնձոր:

*Ճաշարանի մասնաժողովը իւրաքանչիւր 2 շաբաթը մի անգամ ունեցել է նիստեր, ուր վճռուել և քննուել են ճաշարանի զանազան հարցերի վերաբերեալ խնդիրներ և բոլոր արձանագրութիւնները ստորագրութեամբ մասնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամների, ներկայացրւած են ընկերութեան Խորհրդին ի գիտութիւն *):*

**) Ճաշարանի ել և մուտքի մանրամասն հաշիւը տես հաշիւների բաժնում:*

ԽՈՒԴԱԴԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ

(Հիմնուած 1903 թ.)

Որբանոցում սանուհիների թիւն այս տարի 32 էր: Սրանցից 10 հոգի սովորում են Յովնանեան ուսումնարանում, որից 5-ը վեցերորդ դասարանում, 3-ը՝ հինգերորդում և 2-ը՝ չորրորդում: 7 հոգի սովորում են Գայիանեան ուսումնարանի III, IV, V *դասարաններում, 5 հոգի Թանդոյեան դպրոցում, 8 հոգի Զիգրաշէնի դըպրոցում, և 1 հոգի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան կար և ձևի դպրոցում:*

Բացի սրանից որբանոցի սանուհիներից Ս. Մելիքեան, Ն. Սերովբեանց և Շ. Մկրտչեանց սովորում են՝ առաջինը երաժշտական դպրոցում տիկին Իւլիա Սպէնդիարեանի հաշւով, իսկ վերջին երկուսը՝ նկարչութիւն՝ օր. Ե. Պատկանեանի մօտ ձրիաբար:

Որբանոցում տիրող կարգն և կենցաղավարական կանոններն այս տարուայ ընթացքում չեն ենթարկուել որ և է փոփոխութեան, նրանք նոյն էին ինչ որ անցեալ տարի՝ ի բացառեալ այն հանգամանքը, որ 1911 թ. դեկտեմբեր ամսից սանուհիների ճաշը բաղկացած է եղել ոչ թէ մէկ տեսակից, ինչպէս եղել է նախկին տարիների ընթացքում:

Որբանոցի սանուհիների առողջական դրութիւնը այս տարի բաւարար էր: Ընդհանրապէս ամենքը առողջ են և շատերը նրանցից չեն հիւանդացել. հիւանդացողներն էլ չեն ունեցել որևէ լուրջ տկարութիւն, այլ մի քանի օր որբանոցի հիւանդանոցում պառկելուց յետոյ առողջացել են: Բացառութիւն է կազմել Ծ. Հայրումեանցը, որ շարունակաբար տանջւում է մալեարիայով. նոյն իսկ նա էլ վերջին ժամանակ իրան աւելի լաւ է զգում քան առաջ:

Սանուհիները այս տարուայ ընթացքում լի ու լի վայելել են պ. բժիշկ Բ. Աղասարեանի հայրական խնամքն և հոգացողութիւնը:

Սանուհիները իրանց ուսման մէջ այս տարի ցոյց են տուել այնպիսի առաջադիմութիւն, որ չի կարելի ընդհանրապէս գովելի

չհամարել։ Դպրոցական վարչութիւններն, ուր նրանք ուսանում են, գոհ են նրանցից և նոյն իսկ հրապարակաբար գովեստով են խօսում նրանց մասին, ինչպէս օրինակ Յովնանեան ուսումնարանի տեսուչ պ. Ս. Մալխասեանը և Գայիանեան ուսումնարանի տեսուչ պ. Ս. Աբովեանցը, որոնք ընկերութեան 30-ամեայ յօբելեանի առնին իրանց ճառերի մէջ հարկ համարեցին առանձնապէս շեշտել սանուհիների գովելի վարքն և յառաջադիմութիւնը։ Անցած տարուայ ընթացքում դպրոց յաճախող 32 սանուհիներից նոյն դասարանում մնացել են 5 հոգի, իսկ միւս բոլորը փոխել են իրանց դասարանները։

Յիշատակելու արժանի հանգամանք է նաև այն, որ հասակաւոր սանուհիներից մի քանիսի մէջ երևում են սէր և հակումներ դէպի գրականութիւն։ Սանուհիներից Վ. Նալբանդեանը յօրինել է մանկական պիէս — «Սիրոյ բանալին» — վերնագրով, իսկ միւս սանուհի Ս. Մելիքեանը վեր է ածել երաժշտութիւնը։ Որբանոցի կառավարչուհի եղել է օր. Շ. Քեանդարեան։

ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Գրադարան ընթերցարանը կառավարուել է առանձին մասնաժողովով, որի անունը յիշուած է տեղեկագրի սկզբում։

Անցեալ տարուայ նման այս տարի էլ գրադարանի բաժանորդների մեծ թիւը ընդհանրապէս կազմում էր աշակերտութիւնը, որոնց շարքում աւելի մեծ թւով բաժանորդ են տուել Յովնանեան և Գայեանեան օրիորդաց դպրոցները, այնպէս որ 300 բաժանորդի մէջ 143 հոգին եղել են այդ դպրոցների աշակերտուհիները, իսկ մնացածը հայոց ծխական դպրոցների, գիմնազիաների, արհեստաւորաց և մասնաւոր դպրոցների աշակերտ-աշակերտուհիները։

Տարուայ սկզբին գրադարանն ունեցել է	249 բաժ.
Տարուայ ընթացքում բաժանորդագրուել են	814 »
	1063 բաժ։
Տարուայ ընթացքում դուրս են գնացել	743 »
Սոյն տարուայ դեկտեմբերի 31-ին գրադարանն ունէր	320 բաժ.

Բաժանորդների քանակը տարուբերուելով 240—325 թւերի մէջ, նկատելի է եղել որ նա հետզհետէ աճել է, այսպէս առ 1-ն յունվար 1911 թ. բաժանորդների թիւը եղել է 249, մինչ դեռ առ 1-ն յունուար 1912 թ. եղել է 320, այսինքն 71 բաժանորդով աւելի։

Գրադարանից բաց թողած գրքերի և ընթերցարան յաճախողների թւերի մասին ճիշտ գաղափար կազմելու համար առաջ ենք բերում հետևեալ աղիւսակը.—

Ամիսներ	Ընթերցարան յաճախողներ			Տրւած է գրքեր		
	Արական սեռից	Իգական սեռից	Ընդամեն	Գրադար. բաժան.	Ընթերց. կարդալու	Ընդամենը.
Յունուար	2032	438	2470	2004	260	2264
Փետրուար	2272	768	3040	2394	210	2604
Մարտ	2430	863	3293	2582	193	2775
Ապրիլ	2167	700	2867	1566	145	1711
Մայիս	2449	716	3165	1099	185	1284
Յունիս	2488	635	3123	1248	209	1457
Յուլիս	2680	975	3655	1204	228	1432
Օգոստոս	2540	1035	3575	991	250	1241
Սեպտեմբեր	2913	1108	4021	901	213	1114
Հոկտեմբեր	2660	1456	4116	1824	556	2380
Նոյեմբեր	2816	1857	4673	1896	328	2224
Դեկտեմբեր	2963	2217	5180	1935	261	2196
Ընդամենը	30410	12768	43178	19644	3038	22682

Այդ աղիւսակից երևում է, որ ընթերցողների թիւը պարբերաբար շատացել է, այնպէս որ դեկտեմբերին յաճախողների թիւը կրկնակի անգամ աւելի է քան յունվարինը։

Նոյնը նկատելի է լինում նաև անցեալ տարւայ տեղեկագրի հետ համեմատելիս։ Անցեալ տարի ընթերցողների թիւը հասել է 22175-ի, իսկ այս տարի, ինչպէս տեսնում ենք, 43178-ի, այսինքն կրկնակին։

Բաժանորդների պարբերաբար աճելը հետևանք է այն հանգամանքի, որ Խորհուրդը առաջ գնալով ժամանակի և ընթերցող հասարակութեան մտաւոր պահանջի հետ, ձեռք է բերում համարեա թէ բոլոր լոյս տեսնող ընթացիկ հայերէն գրքերը և ռուսերէնից կարևորները։

Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, Խորհուրդը բացի նախահաշւում նշանակւած գումարից, որոշել է Վարդապետեանի կտակած 1114 ր. 82 կ. գումարին էլ յանուն նւիրատուի գնել հայագիտական և հայերէն ընտիր գրքեր *)։

Գրադարանի գրքերի կրկնակի օրինակների մի մասը Խորհուրդը տարւայ ընթացքում նւիրել է զանազան գիւղական գրադարաններին, ինչպէս՝ Բարվանսարայի, Ցարսկիէ-Կոլոցի, Ջխարի և Լագոդաղի ճիւղերին, Ալահի և Շրվենանց դպրոցներին և Թիֆլիսի նահանգի հայերի մէջ օգտակար գիտելիքներ տարածող ընկերութեանը։ Իսկ միւս մասը պահել է այն գրադարանների համար, որ առաջիկայ տարւանից Խորհուրդը մտադիր է հիմնել 15 գիւղական դպրոցներին կից։

Այս տարի գրադարանին նւիրել են գրքեր հետևեալ անձնաւորութիւնները. պ.պ. Սեդրակ Մանդինեանը 758 կտոր գիրք, որից հայերէն 233, ռուսերէն 202 և գերմաներէն 323 կտոր, Յովհ. Դուլթեանը 269 կտոր, Սուրէն Եարեանը 68 կտոր, Սահակ Լիսիցեանը 60 կտոր գաղղիերէն գրքեր և 9 քարտէզ, Գարեգին Երվանդեանը 100 կտոր, Գրիգոր Վարդանեանը պատմական Հայաստանի քարտէզը և զանազան անձեր 50 կտոր գիրք։ Ընդամենը 1305 կտոր գիրք և 10 քարտէզ։

Այդ նւիրած գրքերի մի մասը, որոնք չկային ընկերութեանս գրադարանում, մտցրւած են գրացուցակ, իսկ միւս մասը ուղարկւելու է գիւղական գրադարաններին։

Նւէր ստացած այդ գրքերին աւելանալով տարւայ ընթացքում գնւած մօտ 700 րուբլու գրքերը և այն յաւելւածները, որոնք ստացւել են պարբերական թերթերի հետ, ստացւեց գրքերի մի այնպիսի քանակութիւն, որ հնար չեղաւ տեղաւորել գրադարանի պահարաններում, ուստի Խորհուրդը ստիպւած եղաւ դահլիճի հա-

---

Այդ որոշմանը հաւանութիւն է տւել ընկերութեան ընդհանուր ժողովը, որի առթիւ կազմւել է 12 ձեռնհաս անձերից բաղկացած մի մասնաժողով.

բուայրն պատին կից շինել տալ նոր պահարաններ, որտեղ և տեղաւորուեց աւելացած գրքերը։

Անցեալ տարուանից սկսած գրացուցակի տպագրութիւնը շարունակուել է նաև այս տարի և արդէն տպագրած պատրաստ է ռուսերէն գրացուցակը, որ բաղկացած է 580 երեսից։

Հայերէն գրացուցակից տպած են մանկական և գեղարուեստական բաժինները, իսկ մնացեալները տպւելու են առաջիկայ տարուանից։

Ներկայիս ընկերութեանս գրադարանն ունի ռուսերէն 7600 կտոր գիրք, հայերէն 3650 կտոր, ֆրանսերէն և գերմաներէն 1350 կտոր, ընդամէնը 12700 կտոր գիրք, որը ապահովագրած է 10,000 րուբլով։

1911 թուի ընթացքում ընթերցարանում ստացւած են հետևեալ պարբերական հրատարակութիւնները.

1. Մշակ (2 օր.)
2. Սուրհանդակ (2 օր.)
3. Հորիզոն (2 օր.)
4. Հովիւ
5. Խաթաբալա
6. Աղբիւր
7. Տարազ
8. Հասկեր
9. Գիւղատնտես
10. Նոր Դպրոց
11. Գեղարուեստ
12. Արօր
13. Դարբին
14. Ազգագրական հանդէս
15. Լումա
16. Արարատ
17. Լոյս
18. Ժայռ
19. Ախուրեան
20. Կոչնակ
21. Հանդէս Ամսօրեայ
22. Բազմավէպ
23. Ժամանակ
24. Բիւզանդիոն
25. Անահիտ
26. Тифлис. Листокъ
27. Закавказье
28. Кавказъ
29. Закавказская Рѣчь
30. Баку
31. Рѣчь
32. Русскія Вѣдомости
33. Русское Слово
34. Новое Время
35. Нива
36. Русская Мысль
37. Русское Богатство
38. Вѣстникъ Знанія
39. „ Европы
40. „ Здоровья
41. Запросы Жизни
42. Сатириконъ
43. Будильникъ
44. Родина

45. Доброе утро
46. Юная Россія
47. Новый журн. для всѣхъ
48. Мірокъ
49. Свѣтлячекъ
59. Путеводный Огонекъ
51. Жизнь для всѣхъ
52. Хуторъ
53. Новый Восходъ
54. Синій журналъ
55. Школа и жизнь
56. Маякъ
57. Петерб. газета коп. съ прил.
58. Нева
59. La revue (ֆրանս)
60. Ձվէնի գազէթի (վրացերէն)
61. Մօլլա Նասր-էդդին } Թուրքերէն
62. Սադա }

Կ. Հ. Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ $^{1911}/_{12}$ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՒԱՑ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Խորհուրդը առաջին տարիների նման նպաստել է հայոց եկեղեցական մի և երկդասեան դպրոցների, որոնք ընկած են զանազան խուլ և հեռաւոր վայրերում։ Դպրոցների հոգաբարձութիւնները ստանալով ընկերութիւնիցս սահմանեալ նպաստը՝ նրանք ամեն կերպ հոգս են տարել դպրոցների բաժանմունքների և աշակերտների թիւն աւելացնելու և ըստ կարելւոյն դպրոցական աւելի յարմար շինութիւններ կառուցելու վրայ, որոնց անմիջապէս օգնութիւն են հասել թէ Խորհրդի տուած խորհուրդները և թէ մանաւանդ գիւղական համայնքը։ Ունենալով իրենց ձեռքի տակ որոշեալ հաստատ եկամուտ—ընկերութեանս նպաստը, հոգաբարձութիւններն ամեն ջանք գործ են դրել հրաւիրելու ուսուցիչներ համապատասխան կրթութեամբ (ցենզով) և ներկայիս համարեա չկան դպրոցներ, ուր դասատուները լինեն ոչ բաւարար կրթութեան տէր անձինք։

Խորհուրդը չի կարող չյայտնել իւր ուրախութիւնը հասարակութեան դէպի ընկերութիւնս ցոյց տուած համակրութեան և վստահութեան համար։ Բացի անցեալ տարիների մասնաւոր անձանց և հիմնարկութեանց նպաստներից յօգուտ եկ. ծխ. դպրոցների, Խորհուրդը այս տարի ստացել է նաև պ. Գ. Ի. Տէր-Մարգարեանից նպաստ յօգուտ իւր հայրենի Շրվենանց գիւղում գոյութիւն ունե-

ցող դպրոցի 1800 ր. հետևեալ յայտարարութեամբ:

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան յարգելի Խորհրդին

Իմ հայրենի Տրվենանց գիւղում (Զանգեզուրի գաւառ) ես պահում եմ եկեղեցական-ծխական երկդասեան դպրոց (երկսեռ), որի համար կառուցել եմ յատուկ շինութիւն երկու յարկից: Դպրոցի բոլոր ծախսերը հոգում եմ իմ միջոցներից, բացի լուսաւորութիւնից և վառելիքից, որ տալիս են տեղացիները: Դպրոցն ունի իմ միջոցներով ձեռք բերած դասական բոլոր պիտոյքները, գրադարան և այլն: Բացի դրանից իմ կառուցած շինութիւնը և նրան կից դպրոցապատկան հողը հնարաւորութիւն են տալիս գիւղական տնտեսութեան վերաբերեալ զբաղմունքներ ևս ունենալ դպրոցում: Իմ նպատակն է եղել և այժմս էլ է՝ դարձնել Տրվենանցի դպրոցը կենտրոնական մի ուսումնարանական հաստատութիւն շրջակայ 5—6 հայ գիւղերի համար: Եւ իրաւ, մինչև այժմ այնտեղ սովորում էին մօտ 100 աշակերտներ և աշակերտուհիներ: Իսկ ուսուցչական խումբը բաղկացած էր երկու ուսուցչից և մի վարժուհուց:

Ես անկարող լինելով անձամբ տանել դպրոցի պահպանման հոգսերը, աւելի նպատակայարմար համարեցի այդ կառավարութիւնը յանձնել յարգելի Խորհրդին:

Ուստի, ներկայովս խնդրում եմ, որ Խորհուրդդ իր վրայ վերցնէ Տրվենանց գիւղի դպրոցի կառավարութիւնը առաջիկայ 1911/12 ուսումնական տարուանից:

Իմ կողմից ես կտամ Խորհրդին տարեկան հազար ութը հարիւր ռուբլի, երբեք նուազում: Դպրոցի կանոնաւոր ընթացքը, ուսուցչական կազմի հոգսերը թողնում եմ յարգելի Խորհրդին տնօրէնութեանը:

Ցանկալի եմ համարում, որ կազմուի դպրոցական գոյքի մանրամասն ցուցակ, որ պահուի Խորհրդին գործերում:

Գասպար Տէր-Մարգարեան

28-ին Մայիսի 1911 թ.

Թիֆլիս:

Այս յայտարարութեան համաձայն, Խորհուրդը հրաւիրել է աւագ-ուսուցչութեան պաշտօնի համար նախկին ուսուցչին պ. Ա. Մինասեանին իւր կնոջ հետ և ուսուցիչ պ. Ստ. Յարութիւնեանին: Դպրոցի մասին հարկաւոր տեղեկութիւնները զետեղուած են համապատասխան հաշուեցուցակում:

Ընկերութիւնը թէ իւր միջոցներից և թէ մի շարք կողմնակի հաստատութեանց և անձանց միջոցաւ ստացած գումարներով 1911/12 ուս. տարում յատկացրել է նպաստ Անդրկովկասի հայոց եկեղ. ծխական 61 դպրոցներին ընդամենը—14,920 ռուբլի: Այս գումարը կազմուած է ընկերութեան և հետևեալ բարերարների նուիրատուութիւններից այսպէս՝ Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցական Խորհրդից 4,000 ռուբլի, որով նպաստել է հետևեալ դպրոցներին.

Արդուինի	շրջանի Տանձոտ գիւղի դպ.	150 ր.
Ախալքալաքի	„ Գիւմբուրդա „ „	200 ր.
„	„ Մամզարա „ „	200 ր.
„	„ Տիլիֆ „ „	200 ր.
Ախալցխայի	„ Տամալա „ „	200 ր.
„	„ Ծուղրութ „ „	200 ր.
Աղեքսանդր.	„ Ջորլի „ „	200 ր.
Դուշէթի	„ Դուշէթ քաղաքի „	200 ր.
Կարսի	„ Մաւրակ գիւղի „	25ʼ ր.
„	„ Փիրւալի „ „	250 ր.
„	„ Բաշ Քադիկլար „	200 ր.
„	„ Զարդանէս գիւղի „	200 ր.
„	„ Քիւրակ Դարա „ „	200 ր.
Քութայիսի	„ Սաչխէր „ „	200 ր.
„	„ Ջխար „ „	250 ր.
Փոթւայ	„ Փոթի քաղաքի „	100 ր.
Օլթւայ	„ Օլթի գիւղաքաղաքի	200 ր.
Լոռւայ	„ Գիւլաքարակ գիւղի դպ.	200 ր.
Երևանի	„ Բաշ „ „	200 ր.
Աստրախանի	„ Ղարաջալլի „ „	200 ր.
		4000 ր.

Պ. Տիգրան Աֆրիկեանից 4750 ր., որով նպաստել է հետևեալ դպրոցներին.

Աղէքսանդրապօլի	շրջանի	Նորաշէն գիւղի	դպրոցին	300 ր.
»	»	Մեծ Քափանակ	»	200 ր.
Նոր-Բայազէտի	»	Փաշաքենդ	»	200 ր.
»	»	Սօլակ	»	200 ր.
»	»	Ջիբուխլի	»	400 ր.
»	»	Օրդակլու	»	200 ր.
»	»	Ներքին Ախտա գիւղի դպ.		250 ր.
»	»	Դդմաշէն	»	200 ր.
»	»	Ենդամալ	»	350 ր.
»	»	Նորադուզ	»	300 ր.
Վաղարշապատի	շրջանի	Կարբի գիւղի	դպրոցին	500 ր.
»	»	Բազարճիւղ	»	500 ր.
»	»	Ղարաքիլիսա	»	300 ր.
»	»	Սագլու	»	250 ր.
»	»	Տամբշլու	»	200 ր.
»	»	Հանավանքի	»	200 ր.
Ախալքալաքի	»	Սուլդա գիւղի	»	150 ր.
				4700 ր.

Պ. Գասպար Տէր-Մարգարեանից—1800 ր. Զանգեզուրի գաւառի Շրվենանց գիւղի դպրոցի համար։

Պ. Յովհաննէս Ալիխանեանից—100 ր. Քարվանսարայի շրջանի Աչաջուր գիւղի դպրոցի համար։

Պ. Միքայէլ Ալիբէկեանից—300 ր. Քախուրեկլի գիւղի դպրոցի համար։

Յովհաննէս ա. ք. Գալստեանի՝ ընկ. նուիրաբերած Գօրւայ գաւառի Ախալքալակ գիւղի կալուածքի տարեկան հասոյթից 300 ր. նպաստում է Ախալքալակ գիւղի դպրոցին։

Պ. Սամսոն Յարութիւնեանից—250 ր. Ղազախի շրջանի Վերին Աղդան գիւղի համար։

Պ. Գաբրիէլ Կաֆեանից—150 ր. Քարվանսարայի շրջանի Սուի գիւղի համար։

Հանգուցեալ Աղէքսանդր Մանթաշեանի նուիրած գումարի

տոկոսներով՝ 855 րուբլի նպաստել է հետևեալ դպրոցներին.—Քարվանսարայի շրջանի Ուզուն Թալա գիւղի դպրոցին 100 ր.

»	»	Սև-Քար	»	»	100 ր.
»	»	Թալա	»	»	100 ր.
»	»	Քարվանսարա	»	»	100 ր.
»	»	Գոշավանք	»	»	200 ր.
»	»	Բարանա	»	»	200 ր.
Թիֆլիսի շրջանի		Մուխրան	»	»	100 ր.
					900 ր.

Հանգուցեալ Աղէքսանդր Անանեանի նուիրած գումարի տոկոսներով՝ 1334 ր.—75 կ., որով նպաստել է հետևեալ դպրոցներին։

Ղազախի	շրջանի	Թովուզ գիւղի դպրոցին	100 ր.
,,	,,	Ղազախ քաղաքի	100 ր.
,,	,,	Ղալաչա գիւղի	100 ր.
,,	,,	Ներքին Կարմիր Աղբիւր	100 ր.
,,	,,	Թաթլու	120 ր.
Արդահանի	շրջանի	Արդահան քաղաքի դպրոցին	100 ր.
Գանձակի	,,	Կուսինապատ գիւղի	200 ր.
,,	,,	Ղարաբուլաղ	200 ր.
Յարսկիէ Կօլօդցի ուսանի դպրոցին			100 ր.
Ծալկայի	շրջանի	Դաշբաշ գիւղի	300 ր.
			1420 ր.

Իշխ. Ս. Վ. Արղութեան Երկայնաբազուկից	տարեկան	489 ր.
Իշխ. Բ. Ն. Արղութեան Երկայնաբազուկից	,,	300 ր.
Դաւիթ և Էւա Անանեաններից	,,	75 ր.
Սանահնի գիւղացիներից	,,	60 ր.
Աշակերտների ծնողներից նպաստ	,,	40 ր.
Կալուածքի կապալավարձից	,,	36 ր.
	Ընդամենը	1000 ր.

Վերոյիշեալ անձնաւորութեանց 1000 ր. նուիրաբերուած և ստացուած գումարներով պահւում է Սանահնի դպրոցը։

Սանահնի գիւղի դպրոցի շէնքը երկյարկանի է, որի վերևի յարկը յատկացրած է դպրոցին և բաղկացած է 6 սենեակներից, որոնցից 2 սենեակը դասարանների համար, 2-ը - վարժուհիների,

1-ը ծառայի և 1 սենեակ գործագործական արհեստանոցի համար։ 1911/12 ուսում. տարում հրաւիրուած են դասատուներ օր. օր. Լուսիկ Կարապետեան (աւարտած IV գիմնազ. VIII դասարանը) և Աննա Գարսոյեան (աւարտած Յովնանեան դպրոցի VII դասարանը)։ Վարժուհիներից օր. Ա. Գարսոյեանը պարապում է Հայոց լեզու, Կրօն, Հայոց պատմութիւն, Երգեցողութիւն և Ձեռագործ, իսկ Լ. Կարապետեանը՝ Թւաբանութիւն, Ռուսաց լեզու, Նկարչութիւն և Ձեռագործ։ Վարժուհիները հրաւիրուած են իւրաքանչիւրը 350-ական ր. ռոճիկով, սենեակ, վառելիք, լուսաւորութիւն և ծառայ։ Աշակերտ աշակերտուհիների թիւը տարւայ սկզբում հասել է 85-ի, ներկայիս 69-ի, որից 50 տղայ և 19 աղջիկ, Աշակերտների թւի պակասելու պատճառը դաշտային աշխատանքներն են, որը սկսելիս գիւղացիք իրանց երեխաներին վերցնում են այդ աշխատանքի համար, որ շատ ցաւալի է, բայց հնար չկայ նրանց ստիպելու չըվարւել այդպէս՝ բացի բարոյական ազդեցութիւնից, որը բոլորովին չի ներգործում նրանց վրայ։

Դպրոցի վրայ ներկայ 1911/12 ուսում. տարում ծախսեր են եղել՝ վարժուհիների ռոճիկ—700 ր., դասական պիտոյքների—173 ր. 85 կոպ., մանր ծախսեր 44 ր. 15 կ., չնախատեսնւած ծախսեր—82 ր. ընդամենը 1000 ր.։ Դպրոցը կառավարւել է իշխ. Ս. Վ. Արղութեան—Երկայնաբազուկի ղեկավարութեամբ, որը ունենալով սեփական պանսիօն և լինելով փորձւած և հմուտ դպրոցական գործում, ոչ մի ջանք չէ խնայել այդ դպրոցը բարւոքելու և աւելի լայն հիմունքների վրայ դնելու և բառիս բուն նշանակութեամբ զուտ մայրական հոգատարութեամբ է նայում բոլոր սովորող երեխաների վրայ, կազմակերպելով վարժուհիների միջոցաւ Նոր-տարւոյ տօնածառ, ուղարկելով երեխաների համար նուէրներ, քաղցրաւենիք, գրքեր, տետրեր, պատկերներ և շորեր։ Սոյն ուսումն. թւում դպրոցը ունեցել է 3 աշակերտական ներկայացում (Բեմի համար նուիրել է տեղացի իշխան Արտաշէս Արղութեան-Երկայնաբազուկը մի վարագոյր արժողութեամբ 5 ր.), մէկ զբօսանք դէպի մօտիկ Որնակ գիւղը, որտեղ աշակերտները զբաղւել են նկարչութեամբ բնականից նկարելով բնութեան գեղեցիկ տեսարաններ։

Պէտքէ նկատել, որ երեխաները չափազանց ընդունակ և սիրամիտ են, որի շնորհիւ շատ շուտ են ըմբռնում և իւրացնում վարժուհիների ասածները և որի պատճառով երեխաներին շատ է

սիրում Իշխանուհին և ցանկանում է մայիս ամսին Թիֆլիս բերել դրանց ծանօթացնելու քաղաքի հետ։ Աշակերտները մեծ ձգտում ունեն դէպի ուսումը, ուստի Իշխանուհին մտադիր է այդ դպրոցը միւս տարւանից վերածել երկդասեանի, աւելացնելով և IV բաժանմունք։

Նա մտադրութիւն ունի նաև մօտ ապագայում գործագործական արհեստանոց բանալու։

Բացի ընկերութեան վերոյիշեալ յատկացրած նպաստներից ընկ. ճիւղերն էլ իրենց կողմից յատկացրել են և նպաստել իրենց միջոցներից թէ տեղական և շրջանի դպրոցներին, սրանց աշակերտ աշակերտուհիներին և թէ դպրոցական շինութիւնների համար որոշ գումարներ ընդամենը 8318 րուբլի 50 կոպ.։

Այսպէս.

Ընկ. Ախալքալակի ճիւղը տւել է տեղական հայոց եկեղ. ծխական դպրոցում սովորող աշակ.—աշակերտուհիներին թոշակադրամ—96 ր. նոյն դպրոցի գրադարանին նպաստ—40 ր., շրջանի գիւղերի դպրոցներին կից գրադարաններին—47 ր. 50 կ., տեղական պետական դպրոցում սովորող չքաւոր հայ սաներին—30 ր. նոր կառուցւող ուսումնարանի շինութեան—200 ր., շրջանի Տիլիֆի ծխական դպրոցին նպաստ—50 ր., Գիւմբուրդա գիւղի դպրոցի 5 չքաւոր սաներին նպաստ—10 ր.։ Իգդիրի ճիւղը նպաստել է տեղական դպրոցի չքաւոր աշակերտ-աշակերտուհիներին—19 ր. դպրոցական նոր կառուցւելիք շէնքի համար—25 ր. (Նախորդ տարիների հաւաքած գումարների հետ անում է 200 ր.), տեղական գրադարան ընթերցարանին յատկացրել է 415 ր. 30 կ., Թելաւի ճիւղը Ս. Գայեանեան և Վարդանեան Հ. եկ. ծխ. դպրոցի 5 չքաւոր աշակերտներին թոշակավարձ—60 ր., Մոզդոկի ճիւղը՝ գրադարան-ընթերցարանին նպաստ—451 ր. 94 կ., տեղական հ. եկ. ծխ. դպրոցին—38 ր. 11 կ., Ձխարի ճիւղը տեղական հայոց եկ. ծխ. դպրոցին նպաստ է տւել—300 ր, դպրոցական նոր շինութեան համար—130 ր., Եկատերինօդարի ճիւղը նպաստել է տեղական դպրոցներին—1200 ր., համալսարաններում ուսանողներին թոշակադրամով 845 ր., տեղական դպրոցներում սովորողներին—227 ր. 50 կ., աշակերտների շորերի և կօշիկների—84 ր. 40 կ., Ցարսկիէ Կօլօդցի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին—75 ր. տեղական գրադարան-ընթերցարանին 52 ր. 90 կ., աղքատ աշակերտներին

դպրոցական պիտոյքների համար—2 ր. 65 կ., Բաթումի ճիւղը նպաստել է տեղական հայոց եկ. ծխական դպրոցին—385 ր., Սղղնախի ճիւղը նպաստել է մի աշակերտի տալով թոշակավարձ --15 ր. Գանձակի ճիւղը նպաստել է դպրոցներին –142 ր., Քութայիսի ճիւղը նպաստ է տուել դպրոցին—31 ր. 50 կ., Նովօրոսիյսկի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին—200 ր.. Շուշւայ ճիւղը տուել է տեղական Ագուլեաց դպրոցի պահպանութեան համար—600 ր., թոշակ տեղական չքաւոր աշակերտներին—140 ր., Ղազախի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին—125 ր. 04 կ., Վլադիկաւկազի ճիւղը նպաստել է տեղական դպրոցներին—400 ր, ուսման վճար, շորեր և դասական առարկաներով չքաւոր աշակերտներին—224 ր. 60 կ., Լադօդաղի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին 100 ր., Սուրամի ճիւղը նպաստել է տեղական դպրոցին - 80 ր., Երևանի ճիւղը տեղական դպրոցներին —150 ր., ուսուցիչներին 362 ր., Ղուբայի ճիւղը նպաստ է տուել Ստեփանոսեան և քաղաքային դպրոցի 3 աշակերտների թոշակադրամով—48 ր., Ախալցխայի ճիւղը նպաստել է ուսուցիչներին—65 ր., Գօրւայ ճիւղը նպաստել է տեղական հայոց դպրոցին—50 ր., Արդահանի ճիւղը նպաստել է տեղական հայոց դպրոցին 300 ր., աշակերտ—աշակերտուհիներին—44 ր. 57 կ. Պետրովսկի ճիւղը նպաստել է հայոց դպրոցին—335 ր., Քարվանսարայի ճիւղը նպաստել է տեղական հայոց դպրոցին—42 ր. 66 կ., դպրոցին կից գրադարան-ընթերցարանին—45 ր. 83 կ., ուսուցիչներին—32 ր.:

Գաւառական դպրոցներին յատկացրած նպաստները Խորհուրդը ուղարկել է իր ճիւղերի վարչութիւնների միջոցաւ, որոնք և եղել են վերահսկու տրուած նպաստների գործադրութեան վրայ և բարոյական աջակցութիւն են ցոյց տուել նրանց:

Խորհուրդն աշխատել է հնար եղածին չափ 1) աջակցել, որ բացուեն ծխական դպրոցներին կից գրադարաններ և աշխատել է ամեն կերպ խրախուսել բանալու նորերը և ուղարկել է այդ գրադարանների համար թէ մանկական, թէ պատանեկական և թէ հասակաւորների համար գրքեր: 2) ունենալ տնային դեղատներ հայերէն տպուած դեղերի գործադրութեան հրահանգով: Այդ դեղատներից օգտուել են թէ դպրոցի աշակերտութիւնը և թէ գիւղացիք ուսուցչի միջոցով:

3) Ընկ. նպաստով պահւող դպրոցներին ուղարկուել է «Գիւղատնտես» շաբաթաթերթ և «Նոր Դպրոց» մանկավարժական ամսագիրը: Խորհուրդն դպրոցներին հասանելիք նպաստները ուղարկել է իր ճիւղերի վարչութիւնների միջոցաւ, իսկ անմիջական հսկողութիւն է ունեցել դպրոցների վրայ Հոգևոր իշխանութիւնից նշանակուած ուսումնարանական թեմական Տեսուչը, որը և շրջել է այդ դպրոցները:

Թէև ընկ. Խորհուրդը մեծ քանակութեամբ խնդիրներ է ստացել զանազան վայրերից, որոնք խնդրել են նպաստել կամ նոր բացուած կամ գոյութիւն ունեցող դպրոցների փակման վտանգի առաջն առնելու, բայց Խորհուրդը հնարաւորութիւն չէ ունեցել միջոցների սղութեան պատճառով բոլորի խնդիրներին բաւարարութիւն տալու: Ընկ. $^{1911}/_{12}$ ուս. թւում կրկին աւելացրել է նպաստների քանակը և նպաստել է նոր բացուած և գոյութիւն ունեցող դպրոցների ինչպէս են՝ Բաշ-գիւղ, Դաշբաշ, Սուլդա, Քուրակ Դարա, Թաթլու և Գոշավանք գիւղական դպրոցներին: 1912 թ., երբ հիմնւելու է Դպրոցական-Ուսուցչական փոնդ, Ընկ.-ը հնարաւորութիւն կունենայ աւելի լայն չափով օգնելու գիւղական դըպրոցներին:

Ընկ. նպաստ ստացող հետևեալ գիւղերը աւելացրել են իրենց դպրոցի բաժանմունքները—Տամալա, Սուլդա, Բարանա, Զորլի Դդմաշէն, Զիբուխլի, Փաշաքենդ, Ցարսկիէ Կօլօդցի աւելացրել են III-րդ բաժանմունք, Փիրվալի, Ներքին Ախտա, Սօլակ, Օրդակլու, Սև-Քար, Քարվանսարա՝ IV բաժ. իսկ Վերին Աղդանը աւելացրել է V-րդ. բաժ.: $^{1911}/_{12}$ ուս. թւին ընկերութիւնից նպաստ են ստացել հետևեալ դպրոցները (տես երես 28):

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ Կ. Հ. Բ. ԸՆԿ. ՆՊԱՍՏՈՎ ՊԱՀԻՈՂ ՑՈՒՑԱԿ

ԴՊՐՈՑՆԵՐԻ 1901|12 ՈՒՍ. ՏԱՐԻԱՑ

Նպաստ ստացող գիւղերի և քաղաքների անունները	Կ. Հ. Բ. Ը. ստացած նպաստի քանակը		Դպրոցական բաժանմունքները	Դասատուների թիւը		Սովորողների թիւը		Գրադարան ունի	Տնօրենի բնակարան ունի	Գիւղի տուած գումար	Դպրոցի շէնքը սեփական, վարձու թէ ձրի
	ռուբ.	կ.		Ուսուցիչ	Ուս-չհի	Աշակերտ	Աշակերտուհի				
I Կենտրոն											
1. Մուխրան	100		I-II-III	—	1	12	13	չուն.	չուն.	300	սեփ.
2. Գիւլաքարակ(Լօռւայ շրջան) . .	200	—	I-II-III	1	1	61	23	չուն.	չուն.	216	վարձ.
II Ախալցխայի ճիւղ											
3. Տամալա . . .	200	—	I-II-III	—	1	50	3	ունի	—	—	սեփ.
4. Ծուղրութ . . .	200	—	I-II-III	1	1	54	12	„	—	130	„
III Ախալքալաքի ճիւղ											
5. Գիւմբուրդօ . .	200	—	I-II-III	1	—	80	—	„	—	210	վարձ.
6. Մամծարա . . .	200	—	I-II-III	1	—	41	4	„	—	90	սեփ.
7. Տիլիֆ	200	—	I-II-III	1	—	61	2	„	—	100	վարձ.
8. Սուլդա	150	—	I-II-III	1	1	60	13	չուն.	—	250	„
IV Ալէքսանդրապօլի ճ.											
9. Մեծ-Բափանակ .	200	—	I-II-III	1	-	70	5	—	—	360	„
10. Նորաշէն	300	—	I-II-III-IV	1	1	74	11	—	—	150	սեփ.
11. Ջորլի	200	—	I-II-III	1	—	39	3	—	—	120	„
V Արդահանի ճիւղ											
12. Արդահան . . .	100	-	I-II-III	1	2	70	50	ունի	—	200	վարձ.
VI Արդուինի ճիւղ											
13. Տանձուտ . .	150	—	I-II-III-IV	1	2	35	33	ունի	չուն.	110	սեփ.
VII Գանձակի ճիւղ											
14. Կորինապատ .	200	—	I-II-III-IV	1	2	63	41	„	ունի	—	„
15. Ղարաբուլաղ . .	200	—	I-II-III	1	—	31	2	„	„	—	„
VIII Գօրւայ ճիւղ											
16. Ախալքալակ . .	300	—	I-II-III	1	1	33	27		„	400	սեփ.
17. Բախուրէլի .	300	—	I-II	1	—	13	8	չուն.	չուն.	180	սեփ.
IX Դուշէթի ճիւղ											
18. Դուշէթ . . .	200	—	I-II-III	1	1	8	24	չուն.	չուն.	97	սեփ.
X Կարսի ճիւղ											
19. Բաշ-Բեադիկլար	200	—	I-II-III	1	—	74	—	ունի	—	—	վարձ.
20. Զարդանէս . . .	200	—	I-II-III	1	—	—		„	—	—	սեփ.
21. Մաւրակ	250	—	I-II-III	1	—	54	—	„	—	—	վարձ.
22. Փիրւալի	250	—	I-II-III-IV	2	—	—	—	„	—	—	սեփ.
23. Բուրակ-Դալա .	200	—	I-II-III	2	—	50	—	չուն.	—	160	վարձ.
XI Աստրախանի շրջան											
24. Ղարաջալիլ . .	200	—	I-II	1	—	37	11	—	—	120	սեփ.
XII Ղազախի ճիւղ											
25. Բարանա . . .	200	—	I-II-III	1	—	44	10	—	—	200	„
26. Թովուզ	100	—	I-II-III-IV	2	—	50	—	—	—	250	„
27. Ղազախ	100	—	I-II	1	—	20	18	ունի	—	120	„
28. Ղալաչա	100	—	I-II-III	1	—	32	—	չուն.	—	180	ձրի
29. Ներքին - Կարմիր Աղբիւր	100	—	I-II	—	1	30	—	—	—	130	ձրի
30. Թաթլու	120	—	I-II	1	—	32	2	ունի	—	160	վարձ.
XIII Նոր-Բայազէտի ճ.											
31. Դդմաշէն . . .	200	—	I-II-III	1	—	51	7	„	—	—	„
32. Նորադուզ . . .	300	—	I-II-III	1	1	92	16	„	—	—	„
33. Ներքին Ախտա .	250	—	I-II-III-IV	1	1	115	5	„	—	—	„
34. Ջիբուխլի . . .	400	—	I-II-III	—	1	90	10	չուն.	ունի	—	„
35. Ոնդամալ . . .	350	—	I-II-III	1	1	77	6	„	„	—	„
36. Սօլակ	200	—	I-II-III-IV	1	—	38	—	—	չուն.	—	„
37. Փաշաքենտ . .	200	—	I-II-III	1	—	41	6	—	—	—	„
38. Օրդակլու . . .	200	—	I-II-III-IV	—	—	45	6	—	—	—	„

	Կ. Հ. Բ. Ը. տուած նպաստի քանակը (ռուբ.)	(կ.)	Դպրոցների բաժանմունքները	Դասատուների թիւը: Ուսուցիչ	Դասատուների թիւը: Ու-հի	Սովորողների թիւը: Աշակերտ	Սովորողների թիւը: Աշակերտուհի	Գրադարան ունի	Տնային դեղարան ունի	Գիւղը քանի տուն է	Դպրոցի շէնքը վարձովի՞, թէ անվճար է
XIV Վաղարշապ. ձ.											
39. Բաղարճիւղ *) .	500	—	I-П-Ш	—	—	—	—	չունի.	չունի.	—	
30. Կարբի . . *)	500	—	I·II-Ш	—	—	—	—	—	—	—	
41. Սազլու *) .	250	—	П-Ш	—	—	—	—	—	—	—	
42. Ղարաքիլիսա*) .	300	—	П-Ш	—	—	—	—	—	—	—	
43. Տամջլու . *) .	200	—	I-П-Ш	—	—	—	—	—	—	—	
44. Հանաւանք . *) .	200	—	I-П	—	—	—	—	—	—	—	
XV Չխարի ձիւղ											
45. Չխար	250	—	I-II-Ш	2	—	25	13	ունի	—	80	սեփ.
XVI Փորուայ ձիւղ											
46. Փոթի	100	—	I-II-Ш-IV	—	2	15	8	չունի.	—	35	„
XVII Յարսկ. Կօլօդ. ձ.											
47. Յարսկիէ Կոլօդցի	100	—	I-II-Ш	1	—	14	12	ունի	—	30	„
XVIII Քարվանսար. ձ.											
48. Աչաջուր	100	--	I-П-III	1	—	44	3	չունի.	—	340	„
49. Ուզունթալա . .	100	—	I-П-Ш	1	—	40	12	—	—	327	վարձ.
50. Սև-Քար	100	—	I-П-Ш-IV	1	1	71	24	ունի	—	450	սեփ.
51. Վերին Ազդան .	250	—	I-П-Ш-IV-V	3	1	78	23	„	ունի	250	„
52. Թալա	100	—	I-П	—	1	26	14	չունի.	չունի.	98	վարձ.
53. Սեւ Գիւղ . .	150	—	I-П	1	—	38	10	ունի	—	138	„
54. Քարվանսարա .	100	—	I-П-Ш-IV	3	1	99	26	„	—	380	սեփ.
55. Գոշավանք . . .	200	—	I	—	1	25	9	չունի.	—	50	„
XIX Քուրայիսի ձիւղ											
56. Սաչխեր	200	—	I-П-Ш	1	—	10	15	ունի	չունի.	70	„
XX Օլթուայ ձիւղ											
57. Օլթի . . . *)	200	—	--	—	—	—	—	—	—	—	
58. Բաշ գիւղ . . .	200	—	I-П-Ш	1	—	52	3	ունի	—	—	
Ծալկայի օրջան											
59. Դաշբաշ . . .	300	—	I-II-Ш	—	1	27	8	չունի.	—	100	վարձ.
Գ. Ի. Տէր-Մարգարեան-ցի դպրոց											
60. Շրվենանց գիւղ	1800	—	I-II-Ш-IV	2	1	120	20	ունի	չունի.	50	սեփ.
«Պոլս. Արդուբեան Երկայնաբազուկների"դպ.											
61. Սանահին գիւղում	1000	—	I-II-Ш	—	2	50	19	„	„	70	„

*) Այդ գիւղերի դպրոցներից տեղեկութիւն չի ստացւած:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ 1911 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑԵԼ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա.

Յօգուտ Ընկերութեան ընդհանուր կարիքների

	ր.	կ.
Տիկին Մարգարիտ Աբեանից	50	—
Տիկին Մարգարիտ Անապչեանից	16	—
Գասպար Տէր-Մարգարեանից	20	—
Սուրէն և Նատալիա Ռէւազեաններից . . .	20	—
Մ. Փ.-ի երեխաներից	3	—
Եղբ. Բաղդասարեաններից	50	—
Մկրտիչ և Թովմաս Խանգուլեաններից ի յիշատակ իրանց հանգուցեալ մօր Եղիսաբէթի	100	—
Աղէքսանդր Այվազեանից ի յիշատակ իր հանգուցեալ մօր՝ Մարիամի	100	—
Տիկին Մարիամ Քչլաղեանից	1	25
Արշակ Մաղաթեանից	—	65
Դ. և Ա. Դեմուրեաններից	2	—
X-ից աւկ. Ալիխանեանի յիշատակին	1	—
Թիֆլ. Նաւթարդիւնաբերական Ընկ. . . .	25	—
X-ից մանկան մկրտութեան առթիւ	1	—
Արտէմ Իվանովիչ Սարգսեանի կտակի համաձայն նրա ժառանգ Ի. Ա. Սարգսեանից	300	—
Մնացական Խունունցից	10	80
Խաչ. Ղալէչեանից	6	—
Ռ. Մ. Ադամեանից	1	—
Տիկին Մ. Կուսիկեանից	3	—
Գ. Չիբուխչեանից	4	—
Եղբ. Բաղդասարեաններից	50	—
Աղէք. Զաւրիէվից	3	—
Գալուստ Յարութիւնեանի ժառանգներից . .	50	—
Սերկայի Միրօվից	3	—
Ինժ. Գարեգին Հալաճեանից	10	—

Փոխանցումն 830 ր. 70 կ.

Փոխանցումն 830 ր. 70 կ.

Հանգուցեալ Բայանդուրեանի 2 պսակի վաճառումից	10	—		
Թիֆլ. Քաղաքային Վարկի Ընկերութիւնից .	150	—		
Օր. Դարիա և Կատարինէ Արեշեաններից ի յիշատակ իրանց հանգուցեալ մօր՝ Ոսաննայի	50	—		
Ալեք. Գեր. Ցիցիկեանից Մակար Զմշկեանի միջոցով	50	—		
Թիֆլիսի ժողովարանից՝ չքաւոր աշակերտ-աշակերտուհիների համար դասագրքեր գնելու	125	—		
Տիկին Գուլազեանից	100	—		
Սամսոն Յարութիւնեանից՝ Բարվանսարայի ժողովրդական տան շինութեան համար	50	—		
Խաչատուր Աբրահամեանից	1	—		
Յովհաննէս Յովհաննիսեանից	3	—		
Աւետիս Վարդապետեանի կտակի համաձայն	1114	82	2484	52

Բ.

Յօգուտ որբանոցի

Հոփսիմէ Նաջարեանից որը Էմմայի համար 1911 թւի վճարը ամս. 15 ր.	180	—		
Գրիգոր Գերաս. Կուզանեանից	25	—		
Սարգիս Յարութիւնեանից ի յիշատակ իր եղբօր Աս. Յարութիւնեանի . . .	25	—		
Թիֆլ. Հայուհեաց Բարեգործակ. ընկերութիւնից 4 աշակերտուհու ամառանոցի վճարը	180	—		
Հոփսիմէ Նաջարեանից որը Էմմայի ուսման վարձը	10	—	420	—

Յօգուտ որբանոցի ստացուած է մթերքներով եւ իրերով.—

Սակայեանից 22 ֆ. կուլիչ á 30 կ. . . .	6	60		
Սալակայեայից 10 ֆ. » » » . . .	3	—		
Եփրեմ եպիսկոպոսի միջոցով				
Ալիէվից 8 ֆ. թէյ á 1/40 . . .	11	20		
24 արշին ուրոլեան քաթան á 23 կ. . .	5	52	26	32

Գ.

Յօգուտ ճաշարանի

Գասպար Տէր-Մարգարեանից	20	—		
Տիկին Իւլիա և օր Ս. Թայիրեաններից ի յիշատակ Աղ. Թայիրեանի . . .	35	—		
Օր. Աննա Սերեբրակեանից	5	—		
Աղ. Այվազեանից ի յիշատակ իր հանգուցեալ մօր՝ Մարիամ Այվազեանի .	50	—		
Ե. Կաֆեանից	5	—		
Թիֆլիսի ժողովարանից	495	—		
Գրիգոր Կուզանեանից	25	—		
Գեներալ Մ. Ռ. Դոլուխանեանից իր և իր ընտանիքի կողմից ի յիշատակ հանգուցեալ Ա. Վարդապետեանի . .	20	—		
Բժիշկ Կ. Պ. Արգուտինսկուց ի յիշատակ հանգուցեալ Ա. Երեցփոխեանի . . .	10	—		
Պ. Թումանեանից	5	—		
Սօֆիա և Նունէ Շահնազարեաններից . .	6	—		
Լուսիկ Եարզուլեանից	4	—		
Սահակ և Մարիամ Լիսիցեան ամուսիններից ի յիշատակ Մարիամի մայր Եղիսաբէթ Բաբանասեանի	25	—		
Սարգիս Մելքումեանի միջոցով հացկերոյթի ժամանակ մի խումբ մարդկանցից հաւաքած	63	—		
Տիկին Մ. Աբեանից	100	—		
Եղբ. Սէյլանեաններից	100	—	968	—

Յօգուտ ճաշարանի ստացուած է մթերքներով եւ իրերով

Յ. և Վ. Չիլինգարեաններից մի պատի ժամացոյց	5 —	
Օր. Վարվ. Նազարբէգեանից 1 փ. և 2 ֆ. պանիր	7 56	12 56

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՃԻՒՂԵՐԸ։

Աւելի մանրամասն ծանօթանալու համար ընկերութեան ճիւղերի հետ, բերում ենք, ըստ կարելւոյն ամփոփ տեղեկութիւններ, նրանց գործունէութեան և նիւթական դրութեան մասին, որ կայանում է հետևալում։

Ախալքալաքի ճիւղի Վարչութիւնը 1911 թւականի իր գործունէութեան մէջ ոչ մի ծրագրային փոփոխութիւն արած չունի, այլ գնացել է նոյն շաւղով, որով գնացել են իր նախորդները, միայն ջանք է գործ դրել աւելի ճոխացնելու, բարգաւաճելու և յարմարութիւններ ստեղծելու այն բոլոր ձեռնարկութիւնների համար, որոնք իր՝ կամ կենտրոնական Խորհրդի նպաստով պահպանվում էին։

Վարչութիւնը ձգտել է աւելացնելու մուտքի աղբիւրները, կազմակերպել է երեկոյթ, աշխատել է շատացնել անդամները, ժողովրդի մէջ արթարծել է մասնաւոր նուիրատւութիւններ տալու գաղափարը, մի խօսքով բոլոր հնարաւոր և թոյլատրելի միջոցները գործ է դրել ընկերութեան նիւթականը բարւօք դրութեան մէջ պահելու համար և պէտքէ ասել, որ ինչ որ եղել է անցեալում, քիչ փոփոխութեամբ նոյն դրութեան մէջ է և ներկայումս։ Օրինակ եթէ անցեալ 1910 թ. ունեցել են 93 անդամ, այժմ 1911 թ. ունեն 97 անդամ, այսպէս և միւս մուտքերը, քիչ աւել, քիչ պակաս, որով ստացւել է ընդհանուր մուտքը 1159 ր. 67 կ. իսկ ինչ վերաբերում է ելքին, հետևեալ պատկերն է ներկայացնում։

1. Վարչութիւնը ամէն կերպ աշխատել է ճիւղի կար ու ձևի

արհեստանոցի վրայ, որը այժմս բաւական առաջադիմել է։ Սա մի դրաւէչ հիմնարկութիւն է, որ տեղական աղքատ աղջկերանց սովորեցնում է կար ու ձև և վայելում է ժողովրդի համակրանքը։ Արհեստանոցը 1911 թւականի ընթացքում ունէր երկու ցենզաւոր վարժուհիներ, որոնք ստանում էին թէ ռոճիկ և թէ կատարած գործերից տոկոս միասին 900 ռուբ.։ Բացի սրանից վճարել է բնակարանի, ծառայի, վառելիքի և ուրիշ մանր ծախսերի համար մօտ 450 րուբլի, ընդամենը մօտ 1350 ր.։

Մուտք զանազան պատուէրներից 750 ր. տասը աշակերտուհիներից 300 րուբլի. մնացեալը վարչութիւնն է նպաստում։ Արհեստանոցում սովորում են նաև 20 ձրիավարժ (բոլորը 30 աշակերտուհի են)։

2. Ճիւղի հոգացողութեան յանձնուած գիւղական չորս դպրոցները, որոնք թէև պահւում են կենտրոնական խորհրդի նպաստով, բայց թէ ճիւղից խլում են բացի աշխատանքը այլ և կողմնակի ծախսեր, օրինակ նպաստել է դպրոցներին կից հիմնած գրադարանին 47 րուբլի 50 կոպ.

3. Օգնել է տեղական թէ ծխական և թէ քաղաքային դպրոցների աղքատ աշակերտ-աշակերտուհիներին, առնելով կօշիկ և վճարելով թոշակ 136 ր.

4. Տեղական Հայոց ծխական դպրոցի գրադարանին նպաստ է տուել 40 ր. մանկական գրքերի համար։

5. Իսկ քաղաքի Հայոց ծխական դպրանոցի նոր կառուցվող շինութեանը՝ 200 րուբլի։

6. Օգնել է աղքատներին, տառապեալներին և հիւանդներին նպաստ տալով 199 րուբլի 95 կոպ.

№№ 195/03701, 195/03702.

2 *հատ* 500 *ռուբլիանոց*
№№ 52/1091, 224/0863

15 *հատ* 1000 *ռուբլիանոց*
№№ 136/1602, 147/1741, 32/531, 104/1562, 136/1603, 136/1604, 39/439, 80/2260, 231/4797—4802, 231/4764.

5 *հատ* 5000 *ռուբլիանոց*
№№ 20/125, 69/109, 208/0394, 188/0204

2 *հատ* 25000 *ռուբլիանոց*
№№ 210/211, 28/059

5% ներքին փոխառ. 1905 թ. II շրջանի արժէթուղթ

1909 և 1910 թ. անձեռնմխելի գումարի հաշուին 1100 *ր.* —

1 *հատ* 100 *ռուբլիանոց* № 030964.

2 *հատ* 500 *ռուբլիանոց* №№ 354591, 354592.

5% ներքին փոխառ. 1906 թ. արժէթուղթ

Աբովեան Նազարեան ֆոնդ 6562 *ր.* 50 *կ.*

7 *թերթ* 937,5 *ռուբլիանոց*

№№ Сер. 242 04151—04165, 04796—04800, Сер. 264 05576—05590.

5% ներքին փոխառութիւն 1908 թւի արժէթուղթ

Աբովեան Նազարեան ֆոնդ 100 *ր.* —

1 *հատ* 100 *ռուբլիանոց* № 056377.

5% խաղարկութեան տոմսակներ

Խուդադեան գումար 6 *հատ* I *և* II *կարգ. տոմս* 600 *ր.*
Անձեռնմխելի » 6 » I *և* II » » 600 *ր.* —

7 *հատ* I *կարգի տոմսակներ*
№№ 05703|31, 04478|49, 10591|22, 19578|37, 10994|14, 01414|35, 09236|35.

5 *հատ* II *կարգի տոմսակներ*
№№ 12377|49, 00912|20, 05331|31, 17102|37, 14235|20.

Թիֆլիսի Առեւտրական բանկի ակցիաներ

Խուդադեան գումար 28000 *ր.* —

80 *ակցիա* №№ 36, 37, 41, 488, 2076—2080, 4901—4931, 9559—9598.

Վերոյիշեալ արժէթղթերի մի մասը տրուած է Թիֆլիսի Պետական բանկին ի պահեստ, իսկ միւս մասը գտնւում է նոյն բանկում յատուկ ընթացիկ հաշուի համար։

Բացի վերոյիշեալ արժէթղթերից ընկերութեանս մօտ են գտնւում իբրև գրաւական Խուդադեան քարվանսարայի նախկին կապալառու Միքայէլ Գեանջեցեանի 2 հատ I *և* II *կարգի խաղարկութեան տոմսերը* №№ 12786|16 *և* 11752|25, *որոնց Խորհուրդը ի հաշիւ Գեանջեցեանի պարտքի գրաւ է դրել Թիֆ.* II *փոխ. վարկի ընկերութեան մօտ* 1911 *թ. հոկտեմբերի* 26-*ին*, 6 *ամիս ժամանակով։*

ՑՈՒՑԱԿ

1911 թ. ընթացքում ճիւղերից ստացուած անձեռնմխելի և պահեստի գումարների

Նովօրօսիսկի	ճիւղից	11	55
Թեմիր-Խան Շուրայի	»	5	81
Ախալքալաքի	»	55	22
Ախալցխայի	»	42	95
Թելաւի	»	18	41
Կարսի	»	72	30
Նուխւայ	»	20	—
Սղնախի	»	15	50
Ջխարի	»	7	50
Վլադիկաւկազի	»	91	74
Վաղարշապատի	»	23	54
Արդւինի	»	15	57
Ղափանի	»	57	—
Եկատերինօդարի	»	189	19
Գանձակի	»	15	—
Կաղզւանի	»	12	35
Իգդիրի	»	26	58
Քարվանսարայի	»	7	—
Արդահանի	»	8	75
Երևանի	»	82	50
	Ընդամենը	778	46

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր ժողովների 1911 թ.

I

Մայիսի 27-ին կայացած ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեց բժկպ. Բ. Նաւասարդեանը և քարտուղար պ. Գ. Լևոնեանը: Որովհետև Խորհուրդը մի քանի անգամ դիմել է պ. Գ. Լևոնեանին տալու յիշեալ ժողովի արձանագրութիւնը, սակայն պարոնը չի յանձնել, պատճառաբանելով, որ կորցրել է, որով և Խորհուրդը անկարող եղաւ ժամանակին առաջարկելու ի հաստատութիւն: 'Ի նկատի ունենալով, որ այդ ժողովում քննուել են մի քանի կարևոր հարցեր, ուստի Խորհուրդը բարւոք համարեց, յիշողութեան և լրագրական տեղեկութեանց վերայ հիմնուելով, կազմել այդ ժողովի արձանագրութիւնը, որի մօտաւոր պատկերը հետևեալն է.

1911 թուի մայիսի 27-ին երեկոյեան ժամը 7-ին կայացաւ բազմաթիւ անդամների մասնակցութեամբ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, ուր նախագահ ընտրուեց բժկպ. Բ. Նաւասարդեանը և քարտուղար պ. Գ. Լևոնեանը: Նախագահի առաջարկութեամբ ժողովականները յոտնկայս յարգում են Վեհափառ Կաթողիկոսի ընկերութեան պատուաւոր հովանաւորողի՝ Մատթէոս Բ.-ի, ընկերութեան պատուաւոր անդամ և բարերար Աղէքսանդր Մանթաշեանի և վերստուգիչ յանձնաժողովի երկարամեայ անդամ Աւետիս Վարդապետեանի յիշատակները:

Այնուհետև Խորհրդի առաջարկութեամբ միաձայն ընկերութեան պատուաւոր անդամ է ընտրւում, հիմնարկութեան առաջին օրերից ի վեր աշխատող և Խորհրդի անդամ պ. Գաբրիէլ Սունդուկեանը, որին շնորհաւորելու և պատուաւոր անդամութեան պատշաճ վկայականը յանձնելու համար ընտրւում է յատուկ պատգամաւորութիւն յանձին բժկպ. Բ. Նաւասարդեանի, Ս. Յարութիւնեանի, Ա. Բաբախանեանի և Ղ. Աղայեանի: Ջեկուցւում է իշխ. Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի, հանգուցեալներ՝ Ե. Գ. Ջոհրաբեանի և Թ. Ա.¹

Խոջամինասեանի նուիրատուութեանց և կտակների մասին, որոնք և հաստատւում են. կարդացւում է ընկերութեան 1910 թ. հաշիւը վերստուգիչ յանձնաժողովի զեկուցման հետ, որոնք նոյնպէս հաստատւում են.

Որոշւում է հրաւիրել ձեռնհաս անձանց խորհրդակցութեան, դպրոցական նպաստների բաշխման և որակի առթիւ խորհրդակցելու։ Հաստատուեցին և ընկերութեան մի քանի ճիւղերի ներկայացրած նախահաշիւները։

Ժողովի շարունակութիւնը կայացաւ յունիսի 4-ին երեկոյեան ժամը 7-ին։

1911 թ. մայիսի 29-ին կայացաւ նախընթաց օրուայ ընդհանուր ժողովի շարունակութիւնը 30 անդամների ներկայութեամբ։ Ընդհանուր ժողովի նախագահ բժշկապետ Բ. Նաւասարդեանը, բանալով նիստը, ցաւ է յայտնում, որ այս անգամ սակաւաթիւ է ժողովը, այն ինչ կարևոր խնդիրների շուրջը պիտի լինեն խորհրդակցութիւններ։

Այնուհետև նա յայտնեց, որ Բարեգործական Ընկերութեան անունից, համաձայն ժողովի որոշման, ներկայացաւ ընտրուած պատգամաւորութիւնը նորընտիր պատուաւոր անդամ Գաբրիէլ Սունդուկեանին, նրա բնակարանում և շնորհաւորելով ժողովի անունից, յանձնեց նրան պատուաւոր անդամի սահմանուած դիպլոմը։

Նոյն պատգամաւորութիւնը գնաց նաև իշխանուհի Սոֆիա Արղութեան Երկայնաբազուկի մօտ, համաձայն ժողովի յանձնարարութեան, շնորհակալութիւն յայտնելու ընկերութեան կողմից այն նուիրաբերութեան համար, որ իշխանուհին բարեհաճել էր անել, հիմնելով Սանահնում իր ջանքերով և դրամական արդեամբ մի քարաշէն ուսումնարան, յանձնելով վերջինը Կ. Հ. Բ. Ընկերութեան խնամքին։

Խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանը զեկուցանում է, որ ընկերութեան 30 ամեայ յօբելեանը առաջ մտադրութիւն ունէինք տօնել ներկայ մայիսին, որի առիթով եղան նախապատրաստական ժողովներ Խորհրդի անդամների և հրաւիրուած անձերի մասնակցութեամբ։

Ընկերութեան պատմութիւնը Խորհրդի առաջարկութեամբ յանձն էր առել գրել պ. Լէօն, որի աշխատութիւնը այժմ լիովին պատրաստ է։ Բայց որովհետև նոյն մայիսին հայ հասարակութիւնը

պատրաստւում էր տօնել Շիրվանզադէի գրական գործունէութեան յօբելեանը, Խորհուրդը այդ զուգադիպութեան անյարմարութիւնը նկատելով, բարւօք համարեց ընկերութեան յօբելեանը յետաձգել աշնան։

Մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ գլխաւորապէս արծարծւում էր այն հարցը, թէ ինչ ձևով կատարել յօբելեանը։ Այժմ ցանկալի է մտքերի փոխանակութեամբ որոշել այդ խնդիրը, բայց որպէսզի ժողովականներին յայտնի լինեն մասնաւոր խորհրդակցութեան յայտնած կարծիքները, ես կառաջարկէի ծանօթանալ արձանագրութեան հետ, որն կըկարդայ Խորհրդի անդամ պ. Շահնազարեանը։

Այդ արձանագրութեան ընթերցումից յետոյ պ. Յարութիւնեանը շարունակելով իր խօսքը, առաջարկեց ժողովին յայտնել իր կարծիքը, թէ երբ նա յարմար է գտնում տօնել Ընկերութեան յօբելեանը և ինչ հաստատութեամբ յաւերժացնել այդ յօբելեանը, օրինակ՝ ուսուցչական ֆօնդով, թէ այլ հիմնարկութեամբ։ Ժողովի արտայայտած կարծիքը և մտքերի փոխանակութիւնը նա կարևոր է համարում պարզելու այդ խնդիրները և այն ժամանակ միայն Խորհուրդը, վերստին քննելով այդ հարցը, կարող է ներկայացնել իր մշակած ծրագիրը ընդհանուր ժողովի հայեցողութեան։

Այդ խնդրի առիթով եղան հետևեալ առաջարկութիւնները։

Յով. Մալխասեան։ Քանի որ Խորհուրդը ունեցել է նախապատրաստական ժողովներ յատուկ այդ խնդրին վերաբերեալ, ուրեմն նա աւելի ձեռնհաս է որոշել՝ ինչ հաստատութեան վրայ աւելի նպատակայարմար է կանգ առնել։

Ես կառաջարկէի, որ ինքը Խորհուրդը իր կարծիքը յայտնէր և եթէ կարելի է, նոյն իսկ մի ամփոփ զեկուցում ներկայացնէր ընդհանուր ժողովին։ Միայն այդ առիթով մի ցանկութիւն կարելի է այժմ և եթ յայտնել, դա այն է, որ հիմնուի մի ուժեղ և հաստատուն բան։

Առաքել Բաբախանեան (Լէօ)։ Ես ներկայ էի այդ խորհրդակցական ժողովներին և եթէ այնտեղ 10 առաջարկութիւններ եղան, այս ժողովում առաջարկների քանակը կարելի է նոյն իսկ կրկնապատկել։ Դժուար է այստեղ այդ խնդիրը որոշել։ Առաջարկուած էր ընդհանուր ուսուցչական կամ դպրոցական ֆօնդ հիմնել, որի գոյութիւնը ապահովելու համար դիցուք կհարկաւորւի 30 հազար

բուրլի։ Բայց հարց է, արդեօք կունենա՞նք այդ գումարը։ Ուրեմն նախ և առաջ հարկաւոր է նուէրներ հաւաքել, ֆոնդ հիմնել, ապա որոշել թէ ինչ հիմնարկութեան նուիրաբերել այդ գումարը։ Նուէրների հանգանակած գումարը ինքը ցոյց կտայ, թէ ինչ հարկաւոր է անել։

Խարազեան Սարգիս։ Իւրաքանչիւր հիմնարկութեան գոյութիւնը պահպանելու համար հարկաւոր է նախ և առաջ նրա բիւջէն որոշել, նախահաշիւը պատրաստել։ Դիցուք, որոշում էք հիմնել աշխատանքի տուն։ Բայց չէ՞ որ այդ տունը պահելու և նրա մշտական գոյութիւնը ապահովելու համար հարկաւոր է մի որոշ դրամագլուխ։ Ուրեմն, դրանից և պէտք է սկսել՝ ապա կորոշուի ձեր անելիքը։

Ղազարոս Աղայեան։ Զպէտք է անուն տալ թէ ինչ բանի համար էք հանգանակութիւն անում։ Պէտք է նախ և առաջ դրամական միջոցներ ժողովել։

Մեզ հարկաւոր են շատ հիմնարկութիւններ, բայց ամեն բան չենք կարող անել, դա մեր ոյժերից վեր է. կարելի է ցանկանալ այն, ինչ որ կարող ենք ունենալ։

Այսքան միայն այժմ կարող եմ ասել, որ մենք պէտք է հիմնենք այնպիսի հաստատութիւն, որ զուտ ազգային, զուտ հայկական լինի, բայց նախ և առաջ հարկաւոր է գումարի հանգանակութեան մասին հոգալ։

Մակար Չմշկեան։ Ով ինչ առաջարկութիւն է արել, թող գրաւոր զեկուցում տայ այդ խնդրի մասին և նախահաշուի հետ ներկայացնէ ժողովին, որից պարզ կերևայ՝ թէ ինչն է աւելի նպատակայարմարը և ձեռնտու մեր ընկերութեան շահերի համար։

Տիգրան Յովհաննիսեան։ Իմ կարծիքով չէ կարելի դիմել հանգանակութեան, մինչև նախապէս չորոշուի թէ ինչ հաստատութեան համար էք փող հաւաքում, պէտք է մի նպատակ որոշել և ապա դիմել հանգանակութեան։ Ուսուցչական ֆոնդի հիմնարկութիւնը կարելի է համարել ամենահամակրելի առաջարկ։ Ուսուցիչները անանուն հերոսներ են, որոնց ուսերի վերայ է ծանրացած ժողովրդի լուսաւորութեան և յառաջադիմութեան վսեմ գործը նրանք են, որոնք նիւթապէս և վարձատրութեան տեսակէտից զրկուած են։

Վարժապետներին պէտք է ապահովել մի հաստատուն ֆոնդով, մանաւանդ ծխական դպրոցի վարժապետին, որը կարողանար իր կեանքի ծանր ճգնաժամին միշտ ապաւինել ֆոնդի օգնութեան։

Ուրեմն գաղափարական և թէ այլ տեսակէտներից կարևոր և համակրելի առաջարկ, որ կարելի է անել, դա ընկերութեան 30 ամեայ յոբելեանի առիթով ուսուցչական ֆոնդ հիմնելն է։

Խորհրդի նախագահ՝ Ս. Յարութիւնեան։ Այս խնդրին հարկաւոր է լուրջ վերաբերուել։ Ընկերութիւնը 30 տարի գոյութիւն ունի, ուրեմն հարկաւոր է պատշաճաւոր կերպով տօնել յոբելեանը։ Մասնաւոր խորհրդակցութեան արձանագրութիւնից երևում է, որ այնտեղ տարբեր կարծիքներ են արծարծուել, թէ ինչ եղանակով վայելուչ է յաւերժացնել ընկերութեան յոբելեանը։ Այժմ Խորհուրդը սպասում է ընդհանուր ժողովից որոշ հրահանգներ և ցուցմունքներ, որ ըստ այնմ նա կարողանայ մշակել այդ խնդրին վերաբերեալ մի ծրագիր։

Մեծ նշանակութիւն ունի ինչ դրօշակի տակ պէտք է կանգառնէ մեր վերջնական որոշումը, ըստ այնմ և ժողովուրդը կվերաբերուի. մէկ խօսքով ընդհանուր ժողովը պէտք է որոշ դիրեքտիվներ տայ Խորհրդին և որովհետև այժմ Խորհուրդը պատրաստ և մշակուած ծրագիր չունի, ես առաջարկում եմ յետաձգել մի շաբաթով այս խնդրի վերջնական լուծումը, որպէսզի Խորհուրդը այդ ժամանակամիջոցում կարողանայ ընդհանուր ժողովի տնօրինութեան ներկայացնել իր մշակած ծրագիրը։ Ես գտնում եմ սխալ այն կարծիքը, թէ իբր հարկաւոր է նախ և առաջ ժողովարարութեան դիմել, այստեղ նշանակութիւն ունեցող հանգամանքը՝ նպատակն է, եթէ դիմում էք ժողովրդին հանգանակութեան համար, պէտք է առաջ նպատակը որոշէք, պէտք է յայտնէք թէ ինչ բանի համար էք ժողովարարութիւն անում։ Ուստի ես առաջարկում եմ այսօր յետաձգել այս խնդրի որոշումը, իսկ Խորհուրդը մի շաբաթից յետոյ կներկայացնէ ընդհանուր ժողովին իր մշակած ծրագիրը։

Ժողովը լսելով վերոյիշեալ անձանց յայտնած կարծիքները, որոշեց յանձնարարել Խորհրդին ներկայացնել իր յոբելեանական ծրագիրը յաջորդ ընդհանուր ժողովին, որ նշանակուեց շաբաթ յունիսի 4-ին երեկոյեան ժամը 7 և կէսին։

Ընդհանուր ժողովի նախագահ՝

Բժշկապետ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑ

Պաշտօնակատար քարտուղարի՝

ՅՈՎՀ. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆՑ

II

1911 թուին յունիսի 4-ին երեկոյեան ժամը 8-ին կայացաւ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան մայիսի 30-ի ընդհանուր ժողովի շարունակութիւնը նախագահութեամբ բժշկ. Բ. Նաւասարդեանի և քարտուղարութեամբ Խորհրդի անդամ Յ. Շահնազարեանի։

Նիստը բանալով, նախագահը յայտնում է, որ այսօրուայ օրակարգի հարցերն են. 1) Ընկերութեան երեսնամեայ յոբելեանի տօնելը։ 2) Խորհրդի հերթով հեռացող 4 անդամի, մի փոխանդամի, վերստուգիչ յանձնաժողովի անդամների և փոխանդամների ընտրութիւնները և 3) ընթացիկ հարցեր։

Ն. Աբրահամեանը ձայն խնդրելով, կամենում է մի հարցապնդում անել Խորհրդին, այդ օրերը մի լրագրում լոյս տեսած լուրի առթիւ, սակայն նախագահը պարզում է որ այդ չի կարելի, որովհետև այս ժողովը շարունակութիւն է նախկին ժողովի, որի ժամանակ այդ լուրը չկար, իսկ այսօր էլ օրակարգում այդպիսի կէտ չկայ, խնդրում է անցնել օրակարգին։

Այնուհետև Խորհրդի անդամ պ. Ա. Սարուխանեանը կարդում է Խորհրդի զեկուցումը ընկ. երեսնամեայ յոբելեանը տօնելու առթիւ, որով առաջարկում է հիմնել դպրոցական-ուսուցչական ֆոնդ, (30 ամեայ յոբելեանի առթիւ) նպաստելու ա. դպրոցական շէնքեր շինելու և նոր դպրոցներ հիմնելու, բ. օգնելու չքաւոր և ծեր ուսուցիչներին և նպաստելու նրանց ամառային ամիսներին զանազան կուրսերում կատարելագործուելու համար։ Բացի այդ ընդունել նաև յատուկ նուէրներ։

Խորհրդի փոխանդամ Ն. Ղալայեանը, ասում է, որ ինքը միանալով այդ առաջարկին, միևնոյն ժամանակ բարւոք է համարել հիմնել ֆոնդ ժողովրդական գրադարաններ բանալու և ձրի բաժանելու համար գրքեր հրատարակելու։ Շահնազարեանը, իբր Խորհրդի քարտուղար, պարզում է որ այդ բանը մտած է Խորհրդի արձանագրութեան մէջ, իսկ այստեղ զեկուցւում է միայն նրա որոշումը և ոչ թէ Խորհրդի նիստում յայտնուած ցանկութիւնները, որպիսիք առաջարկուեցին և միւս անդամների կողմից։

Հ. Առաքելեան յայտնում է, որ ինքը իր կողմից առաջարկում է հիմնել գրական ֆոնդ, որի կարիքը վաղուց նկատելի է։ Թող Բարեգործական Ընկերութիւնը նախաձեռնող հանդիսանայ այդ

բանին, իսկ հասարակութիւնը կնպաստի դրան, նման ֆոնդի սկիզբը մեր ընկերութիւնը կարող է դնել, դէպի որը հասարակութիւնը միշտ ունեցել է հաւատ։

Յ. Ս. Մալխասեան նկարագրելով ուսուցիչների կրած նեղութիւնները և նրանց տուած օգուտը հասարակութեան, ասում է, դպրոցական-ուսուցչական ֆոնդը չբաժանել մասերի, այլ յատկացնել միմիայն ուսուցիչների ապահովութեան, որոնք լինելով մեր չարքաշ աշխատաւորները, միանգամայն զուրկ են որ և է ապահովութիւնից, Բարեգործական Ընկերութիւնը պէտք է գէթ մասամբ ապահովէ նրանց։

Տիկին Վ. Մամուլեան ասում է, որ այդ բոլորն էլ բարի նպատակներ են, սակայն Բարեգործական Ընկերութեան պարտքն է նախ օգնել և նպաստել չքաւորներին, տնանկներին և ծերերին, ուստի առաջարկում է հիմնել աշխատանքի տուն, մանաւանդ որ այդ բանը քիչ դրամագլխով էլ կարելի է իրագործել։

Գ. Վարդանեան շնորհաւորում է Խորհրդի առաջարկը, որ յիշել է ուսուցիչներին և մտածում է նրանց ապահովութեան համար. ուսուցիչները մեր խաւար գիւղերի լուսատու ջահերն են ներկայանում, սակայն ոչ ոք նրանց համար չի մտածում և նրանց չի մօտենում, գովելով Խորհրդի ընդունածը, առաջարկում է միանալ նրան։

Ս. Մելքումեան ասում է, որ ուսուցիչների ապահովութեան ֆոնդի հարցը ինքն է առաջարկել դեռ 3-4 տարի սրանից առաջ, այժմ, երբ առիթը ներկայացել է, օգնենք նրանց, նա աւելի բարւոք է համարում բաժանել դպրոցականը, և հիմնել միմիայն ուսուցիչներին խնամող ֆոնդ։

Ա. Բաքախանեան ասում է, որ ուսուցիչները ժիր և օգտակար գործիչներ են և միևնոյն ժամանակ անապահով վիճակի մէջ, այդ մեզ բոլորիս յայտնի է և բացատրելու ոչ մի կարևորութիւն չի զգում, բայց արդեօք այդ առաջարկ մտցնողները մտածե՞լ են թէ դրանք ինչ թիւ են կազմում։ Մի քանի տարի առաջ, երբ ուսուցիչներից ցենզ էր պահանջւում, պարզուեց որ դրանց թիւը մօտ 500 է, այժմ, ի հարկէ, աւելի շատ կլինի և դրանց նպաստելու համար մի քանի հարիւր հազար րուբլիները ոչինչ չեն կարող անել, իսկ աւելին ժողովել, մենք դժուար թէ կարողանանք, քանի որ մենք ուսումնարաններ հիմնելու գործում մեծ եռանդով աշխատելուց յետոյ այժմս հազիւ կարողանում ենք տարեկան 11000 ր.

ծախսելու, որ մի կաթիլ է ծովի մէջ, ապա ուրեմն հիմնել մի ֆոնդ, որ միայն անունով պէտք է լինի և ոչ իսկական գործ, իզուր է, ուստի առաջարկում է հիմնել գրական ֆոնդ։

Ս. Յարութիւնեան ասում է, որ այս ժողովում մենք անկարող ենք խիստ կերպով որոշելու, թէ ինչ նպատակի պէտքէ յատկացնենք նուէրները, դրանով մենք կսահմանափակենք նուիրատուների կամքը, որ ցանկալի չէ. այս ժողովը պէտք է կրի խորհրդակցական կերպարանք, մենք միայն յայտնելու ենք ցանկութիւններ, իսկ նուիրատուներին պէտք է ազատ թողնել, ով ինչ նպատակի կամենայ նուիրի. մենք պէտք է միայն յայտնենք, որ նուէրները գործադրուելու են մեծ մասամբ գաւառների համար կուլտուրական նպատակներով, կարող ենք աւելացնել և գրական ֆոնդը, իսկ երբ նուէրներ կստացուին յոբելեանի առթիւ, այն ժամանակ պէտք է նորից կազմել ընդհանուր ժողով և նուիրատուների հետ համաձայնութեան գալով, յատկացնել մէկ կամ աւելի նպատակների, որոնք նախատեսնուած են ընկ. կանոնադրութեան մէջ. այժմ միայն պէտք է յայտարարել հետևեալը ա) որ նուէրները, ինչպէս ասուած է վերև, յատկացնուելու են գաւառների կուլտուրական-կրթական կարիքներին և բ) որ ժողովը իր առաջի ընդհանուր ժողովում բարւոք համարեց այդ կարիքներից գերագոյն համարել դպրոցների և ուսուցիչների ապահովութեան խնդիրը, որի համար կարևոր է համարում հիմնել յատուկ ֆոնդ ի յիշատակ յոբելեանի։

Տ. Յովհաննիսեան ասում է, որ այս ժողովը պէտք է վճռի, թէ ինչ նպատակի պէտք է յատկացնի գումարը. մենք հէնց դրա համար էլ հաւաքուել ենք, սակայն միացնել ուսուցչական-դպրոցականին և գրական ֆոնդը, գտնում է աւելորդ, որովհետև գումարը նախ շատ մեծ չի լինել, հետևապէս երկուսին հազիւ բաւարարութիւն տայ, ուր մնաց թէ երեքին, բացի այդ, գրական ֆոնդ կարելի է հիմնել յաջորդ տարի, երբ լրանում է տպագրութեան 400 տարին և լաւ առիթ է ներկայանում այդ ֆոնդի հիմնելուն, ինքը առաջարկում է հիմնել միայն ուսուցչական ֆոնդ։

Գ. Կաֆեան ասում է, որ ուսուցիչն էլ նոյն հայ ժողովուրդն է, ինչպէս այս վերջինս միշտ թշուառութեան և նեղութեան մէջ է, նոյն է և նրա ուսուցիչը, մենք միշտ եղել ենք նեղութեան մէջ և լինելու ենք, դա մի պատմական իրողութիւն է, որի դէմ մենք ոչինչ չենք կարող անել, մեզ հարկաւոր չէ ստեղ-

ծել փառաւոր ֆոնդեր, ույժ տանք ունեցածներիս. այն է դպրոցական ֆոնդին։

Իշխ. Մ. Թումանեան ասում է, որ գրական և դպրոցական ֆոնդեր մենք ունենք, հետևապէս դա նոր բան չէ, ուստի առաջարկում է հիմնել ուսուցչական ֆոնդ։

Յ. Թումանեան, գրական ֆոնդը համարելով լաւ, թողնում է յաջորդ տարուայ, տպագրութեան 400 ամեայ յոբէլեանին, իսկ այժմս առաջարկում է ուժեղացնել դպրոցական-ուսուցչական ֆոնդը։

Ա. Աւագեան, յայտնելով իւր ուրախութիւնը, որ Բարեգործական Ընկերութիւնը ասում է իւր հեղինակաւոր խօսքը յօգուտ ուսուցիչների, միանում է դպրոցական-ուսուցչական ֆոնդ հիմնելու գաղափարին։

Գ. քահանայ Երզնկեանը, առաջարկում է աւելացնել դպրոցական ֆոնդը, որով հնարաւորութիւն կունենանք նպաստների քանակն աւելացնելու, որ և կը ծառայի իբր ապահովութիւն և մեր ուսուցիչներին։

Ս. Խարազեան, այն կարծիքն է յայտնում, որ նպատակը թողնուի անորոշ, քանի որ բոլոր յիշուածներն էլ ցանկալի են, ուստի ներկայիս ժողովը թող յայտնի միմիայն ցանկութիւններ, որով կառաջնորդուեն յոբէլեանի առթիւ նուիրուելիք գումարների գանձման ժամանակ։

Նախագահը ամփոփելով հարցերը, քուէարկութեան է դնում հետևեալ բանաձևերը։

1) «Այժմեանից որոշել հիմնուելիք ֆոնդի նպատակը», թէ ոչ։ Ժողովականք բաց քուէարկութեամբ ցանկութիւն են յայտնում, որ որոշուի։

Հ. Առաքելեանի հարցման, թէ Խորհուրդը ինչ է առաջարկում, հիմնել մի ֆոնդ, ուսուցչական-դպրոցական անունով, թէ՞ երկու՝ ուսուցչական և դպրոցական։ Խորհրդի նախագահը բացատրում է, որ Խորհուրդը առաջարկում է հիմնել երկու ֆոնդ, ուսուցչական և դպրոցական, թէև մի, այսինքն ուսուցչական-դպրոցական ֆոնդին էլ նա դէմ չէ։

Նախագահը, այդ պատճառաւ երկուսն էլ դնում է քուէարկութեան, այն է. 1) «հիմնել դպրոցական և ուսուցչական ֆոնդ» առանձին-առանձին և 2) «հիմնել դպրոցական-ուսուցչական ֆոնդ»։ Երկու բանաձևերն էլ մերժւում են։

Որովհետև տ. Վ. Մամուլեան հրաժարւում է իւր առաջարկութիւնը՝ «հիմնել աշխատանքի տուն», դնել քուէարկութեան, ուստի նախագահը հերթով դնում է քուէարկութեան միւս յայտնած ցանկութիւնները, այն է. հիմնել «Տարրական դպրոցներ, ժողովրդական գրքեր հրատարակելու և գրադարաններ բանալու համար ֆօնդ» և «Գրական ֆօնդ», երկու բանաձևերն էլ մերժւում են համարեա միաձայն։ Ապա քուէարկւում է հիմնել 1) «Դպրոցական ֆօնդ» որը անցնում է 26 ձայնով ընդդէմ 20-ի «Ուսուցչական ֆօնդ», որը նոյնպէս անցնում է 20 ձայնով ընդդէմ 19-ի։

Կ. Տիրինեան ասում է, որ թէև «դպրոցականը» աւելի շատ ձայն է ստացել, սակայն «Ուսուցչականն» էլ չի մերժւել և յօգուտ այդ երկու նպատակների տուած ձայների մէջ այնչափ փոքր է զանազանութիւնը, որ դժուար է առաւելութիւն տալ մէկին և բացասել միւսը, ուստի ցանկութիւն է յայտնում ունենալ երկուսն էլ, թէ դպրոցականը և թէ ուսուցչականը։

Ս. Յարութիւնեան յայտնում է, որ ժողովականների որոշումներից նկատուեց, որ երկու նպատակն էլ համակրելի են, ուստի առաջարկում է նորից քուէարկել Խորհրդի առաջարկը, այն է «Երեսնամեայ յօբէլեանի առթիւ հիմնել դպրոցական-ուսուցչական ֆօնդ»։

Գ. Վարդանեան միանում է Ս. Յարութիւնեանի ասածին։

Ս. Չերքեզեան ասում է, որ թէ այդ և թէ միւս բանաձևերն առանձին-առանձին դրուեցին քուէարկութեան և իրենց որոշումը ստացան։ Վերջին երկու հարցերը շատ գեղեցիկ կերպով պարզուեց թէ դրական և թէ բացասական կողմից և շատ ճիշտ երևաց, որ «դպրոցական ֆօնդը» աւելի շատ ձայն է ստացել ուրեմն և լուծումն է ստացել, հետևապէս ոչ մի նոր քուէարկութեան կարիք չկայ։

Ծ. Յովհաննիսեան ասում է, որ այդ երկու առաջարկութիւնն էլ անցել են, միայն մի թիւրիմացութեամբ, մէկը մի քանի ձայն աւել է ստացել միւսից, առաջարկում է քուէարկել նորից «Ուսուցչական-դպրոցական ֆօնդ» բանաձևը։

Ա. Պապովեան ասում է, որ ենթադրութեանց կարիք չկայ, խնդրում է Նախագահին պատասխանելու-արդեօք «դպրոցական ֆօնդը» ձայների բազմութեամբ անցա՞ւ, թէ ոչ։ Նախագահը դրական պատասխան է տալիս։ Ապա հարցնում է, որ և է առիթ կա՞յ այդ հարցերին դիմելու։ Նախագահը ասում է, որ ինքը ոչինչ չունի, բայց ժողովականները ցանկանում են խօսել։

Բժ. Ա. Ջարգարեանը ասում է, որ ընդունուած է թէ «դպրոցական» և թէ «Ուսուցչականը», այսինքն այն, ինչ առաջարկում էր Խորհուրդը։

Յ. Թումանեան ասում է, որ ինքը թէ և ձայն է տուել յօգուտ «դպրոցական ֆօնդի» սակայն «ուսուցչականին» էլ դէմ չի. ուստի չի ցանկանում այդպէս շտապողական անցնել այդ և եթէ այդպէս մնայ, ինքն առաջինը կլինի բողոքողը այդ մասին։ Մենք այլ ևս ոչ մի առիթ չենք ունենալ ուսուցիչների ապահովութեան հարցին դառնալու, հետևապէս և յարմար դէպքից պէտք է օգտուել։

Ա. Սարուխանեան ասում է, որ Խորհուրդը ընդհանուրի տրամադրութեամբ դրել է այդ հարցը, բայց քանի որ այսպիսի ձև ստացաւ, ուստի նորից պէտք է հարցնել ժողովի ցանկութիւնը։

Զ. Մամուլեան յայտնում է, որ ժողովը հէնց սկզբից որոշեց հիմնուելիք ֆօնդը յատկացնել մի նպատակի և նա ամեն մի առաջարկութիւն առանձին-առանձին քուէարկելով որոշեց հիմնել «դպրոցական ֆօնդ», այլ ևս ինչ կարիք կայ նոր քուէարկութեան։

Նախագահը այդպէս թեր և դէմ խօսակցութեանց պատճառաւ քուէարկում է հետևեալ բանաձևը. «ժողովականք ցանկանո՞ւմ են նորից քուէարկել Խորհրդի առաջարկը, այն է հիմնել դպրոցական-ուսուցչական ֆօնդ», ժողովը 32 ձայնով որոշում է նորից քուէարկել։

Մի քանիսը բողոքում են այդ ձևով որոշումներ կայացնելու դէմ, առարկելով, որ դա ապօրինի է։

Նախագահը, յայտնում է, որ ժողովը ձայների բազմութեամբ ցանկութիւն է յայտնում նորից քուէարկել Խորհրդի առաջարկը, այն է հիմնել «դպրոցական-ուսուցչական ֆօնդ», որը և դնում է քուէարկութեան։

Ս. Չերքէզեան նորից բողոքում է. ասելով որ այդ ապօրինութիւն է, բարձրանում է աղմուկ, Նախագահը առաջարկում է ժողովականներին յայտնել իւրեանց վճիռը դրուած հարցի առթիւ։ Ժողովականները 32 ձայնով որոշում են ընդունել Խորհրդի առաջարկը, այն է, հիմնել «դպրոցական-ուսուցչական ֆօնդ»։ Այս հարցի քուէարկութեանը ներկայ էին 51 անդամ։

Ա. Բաբախանեան յայտնում է, որ ժողովականներից շատերը արդէն հեռացել են, ուստի այդ որոշումը գտնում է սխալ։

Նախագահը ասում է, որ «դպրոցական-ուսուցչական ֆօնդը»

այնքան համակրելի գործ է և ամեն մի հայի սրտի մօտ, որ ոչ ոք նրան դէմ չի լինիլ և եղած թերութիւններն էլ հարթուած կհամարուին։

Ժողովականները ծափահարութեամբ յայտնում են իրենց գոհունակութիւնը։

Այնուհետև ժողովը անցնում է օրակարգի միւս հարցին, անդամակցական վճարների պակասեցման խնդրին։ Այս առթիւ Խորհրդի նախագահը ասում է, որ վաղուց նկատելի էր անդամակցական վճարի 5 ր. ծանր լինելը, մանաւանդ գաւառական քաղաքների և գիւղերի համար, ուստի Խորհուրդը առաջարկում է պակասեցնել այդ գումարը, թողնել նահանգական քաղաքների համար 5 ր. իսկ ուրիշ տեղերի համար դարձնել՝ գաւառական քաղաքներում 3 ր. իսկ գիւղերում 2 ր.։

Տ. Յովհաննիսեան, իբրև Ախալքալաքի ճիւղի ներկայացուցիչ, ասում է որ այնտեղի ճիւղի վարչութիւնը իրեն գրել է, յայտնելու ժողովին, որ տեղական բնակիչների համար 5 ր. լինի վճարը թէ 3 միևնոյն է, ուստի ցանկալի է համարում նահանգական քաղաքներին թողնել 5 ր. գիւղերին 3 ր. իսկ գաւառական քաղաքներինը թողնել տեղական վարչութեանց հայեցողութեան։

Մի քանիսը յայտնում են, որ վճարների պակասեցնելը լինի ընդհանուրի համար, միւսները որ լինի մի քանի կարգի անդամներ օրինակ 5, 3 և 2 րուբլի վճարողներ, միւսները միանում են Խորհրդի առաջարկին։ Նախագահը քուէարկութեան է դնում Խորհրդի առաջարկը, այն է՝ «պակասեցնել անդամակցական վճարների քանակը, դարձնելու գաւառական քաղաքների համար 3 ր. գիւղերի—2 ր. իսկ նահանգական քաղաքներինը թողնել նոյնը 5 ր.» Ժողովականները 46 ձայնով ընդդէմ 4-ի որոշում են ընդունել։

Ապա նախագահը առաջարկում է կատարել ընտրութիւն հերթով հեռացող Խորհրդի անդամների՝ պ.պ. Ս. Յարութիւնեանի, Ա. Սարուխանեանի, Յ. Շահնազարեանի և տ. Հ. Առստամեանի փոխարէն։

Ժողովականները միաձայն խնդրում են բաց քուէարկութեամբ վերընտրել բոլորին էլ։

Ս. Յարութիւնեան և Ա. Սարուխանեան հրաժարւում են ընտրուելուց։ Յ. Շահնազարեանը խնդրում է նաև իր փոխարէն ընտրել ուրիշին։ հակառակ դէպքում ապագայում վատ օրինակ չլինելու համար, ընտրութիւնը կատարել գաղտնի քուէարկութեամբ։

Ժողովականները խնդրում են բոլորին էլ մնալու, ի նկատի ունենալով նրանց արդիւնաւէտ գործունէութիւնը։ Պարզւում է որ պ. Ա. Սարուխանեանը հրաժարւում է, քաղաքից հեռանալու պատճառով, ուստի ժողովականները յայտնելով պ. Ա. Սարուխանեանին իրենց շնորհակալութիւնը, միւսներին նորից խնդրում են մնալ և միաձայն բաց քուէարկութեամբ, որին յակամայից համաձայնում է և պ. Շահնազարեանը, վերընտրում են Խորհրդի անդամութեան պաշտօնով տ. Հ. Առստամեանին, պ.պ. Ս. Յարութիւնեանին և Յ. Շահնազարեանին, որոնց ընտրութիւնն ընդունւում է ծափահարութեամբ։ Չորրորդ անդամի՝ պ. Ա. Սարուխանեանի տեղ, նոյնպէս միաձայն և բաց քուէարկութեամբ ընտրւում է իշխանուհի Մարիամ Թումանեանը, իսկ փոխ-անդամ պ. Կարապետ Տէրեան։

Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ վերընտրուեցին միաձայն, բաց քուէարկութեամբ՝ պ.պ. Ս. Շահվերդեան, Ա. Աւագեան և Ս. Խարազեան. փոխանդամներ պ.պ. Մ. Մաղաքեան և Ջահանգիր Աթայեան։

Ժողովը փակուեց գիշերուայ ժամը 11-ին։

Ընդհ. ժողովի նախագահ՝

Բժշկապետ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Քարտուղար՝

Յ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովի կայացած դեկտեմբերի 18-ին 1911 թ. ընկերութեան երեսնամեայ յօբելեանի առթիւ։

1911 թուի դեկտեմբերի 18-ին Արտիստիքական ընկերութեան դահլիճում կայացաւ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան յօբելեանական հանդիսաւոր ընդհանուր ժողովը, մասնակցութեամբ Բ. Ընկերութեան բազմաթիւ անդամների և կողմնակի անձերի, ի թիւս որոց ներկայ էին և Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու եկած տաճկահայ պատգամաւորներից մի քանիսը, ինչպէս պատրիարքի ներկայացուցիչ Յակոբ—Աշոտ եպիսկոպոսը, Թորգոմ եպիսկ., Նշան վարդապետ Գրիգորիս վարդապետ, Երուանդ Տէր-Անդրէասեանց, Միհրդատ Հայկազն, Թէքէյեան և այլք։

Խորհրդի նախագահ պ. Ս. Յարութիւնեան, ցերեկւայ ժամը 12 և կէսին բանալով նիստը, խնդրում է ընտրել ընդհանուր ժողովի համար նախագահ։

Ժողովականները նախագահ են ընտրում ընկերութեան հիմնադիր և պատուաւոր անդամ բժշկապետ Բագրատ Նաւասարդեանին, որի ընտրութիւնն ընդունւում է բուռն ծափահարութեամբ։

Նախագահը բռնելով իւր տեղը, շնորհակալութիւն է յայտնում իրեն ցոյց տուած պատուի համար։ Նա շնորհաւորում է ընդհանուր ժողովին ընկերութեան երեսնամեայ գոյութեան առթիւ, յայտնում է, որ ընկերութիւնը սկիզբն է առել սովի և պատերազմի տարին, որպէսզի սփոփի և մխիթարի բազմաթիւ որբերի, այրիների և չքաւորների կարիքը։ Բարեգործական Ընկերութիւնը պատուով է տարել իւր վերայ դրած պարտականութիւնն ու յոյսերը և այսօր նրա բազմաթիւ ճիւղերը և ընդհանրապէս ընկերութեան ներկայ դրութիւնը ցոյց են տալիս, որ հասարակութիւնն էլ մեծ հաւատով և վստահութեամբ է վերաբերուել դէպի նա, իսկ նրա վարիչ-

ներն ոչ մի եռանդ չեն խնայել ընկերութեան բարգաւաճման և հարատեւութեան համար։ Նախագահը, վերջացնելով իր շնորհաւորական խօսքը, առաջարկում է յոտընկայս յարգել ընկերութեան հովանաւորի Մատթէոս Կաթողիկոսի յիշատակը, որ և կատարւում է։ Ապա առաջարկում է յարգել, ոտքի կանգնելով, ընկերութեան բոլոր հանգուցեալ բարերարների և գործիչների յիշատակները, որ նոյնպէս ընդունւում է միահամուռ, որից յետոյ անցնում են օրուայ հարցերին։

Խորհրդի անդամ բժ. Բ. Աղասարեանը կարդում է ընկերութեան երեսնամեայ գոյութեան համառօտ զեկուցումն, որից երեւում է, որ ընկերութիւնը իւր գոյութիւնը, սկսելով շատ նեղ սահմաններում, աստիճանաբար բարգաւաճում և հարստանում է, շնորհիւ հասարակութեան դէպի ընկերութիւնն ունեցած հաւատի և մի շարք բարերարների արած խոշոր նուիրատուութեանց։ Այժմ ընկերութիւնն ունի քառասունից աւելի ճիւղեր, պահում է որբանոց, աշակերտական ճաշարան, գրադարան-ընթերցարան և այլն։ Վերջացնում է զեկուցումն, յորդորելով ամեն մի հայի նպաստել ընկերութեանը։

Զեկուցման ընթերցումից յետոյ յատուկ այդ օրուայ համար պատրաստած երգեցիկ խումբը երգում է «Որ վառեցեր» օրհներգը։

Օրուայ հարցերի երկրորդ կէտն էր, ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ Փոխարքայ Կոմս Ի. Ի. ՎԱՐԱՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻՆ և նորա ամուսին ԵԼԻԶԱՎԵՏԱ ԱՆԴՐԷԵՒՆԱՅԻՆ ընկերութեան պատուաւոր անդամ ընտրելը։

Խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեանն ասում է, որ ընկերութեան երկրորդ սահմանափակ շրջանից դէպի երրորդ՝ լայն շրջանը անցնելուն անսահման կերպով նպաստել է երկրիս Կառավարչապետը, ներկայումս էլ նա միշտ բարեացակամ վերաբերմունք է ցոյց տուել դէպի ընկերութիւնը, չի եղել մի դէպք, երբ Խորհուրդը դիմէր նրան որ և է խնդրով և նա մերժէր, հէնց մօտերս նա առանց որևէ խոչընդոտների և դժուարութեան թոյլ տուեց ժողովարարութիւն անել ամբողջ Կովկասում յօգուտ Դպրոցական-ուսուցչական ֆոնդի։ Ոչ պակաս բարեացակամ է վերաբերուել և Կոմսի ամուսին ԵԼԻԶԱՒԵՏԱ ԱՆԴՐԷԵՒՆԱՆ, ամեն տարի և ամեն առիթից օգտուելով, նա իւր լուման չի զլացել մտցնելու ընկերութեան գանձարանը, յօգուտ ընկերութեան ոչ մի երեկոյթ

չէ եղել, որ նա չյաճախէր, որով բացի նիւթականը, մեծ օգուտ է բերել և բարոյապէս, բարձրացնելով ընկերութեան հեղինակութիւնը հասարակութեան աչքում։ Ընկերութիւնը ստանալով Կոմսից և Կոմսուհուց այսպիսի բազմաթիւ բարիքներ, նրա վրայ պարտականութիւն կայ երախտագիտական զգացմունքներ յայտնելու, ընտրելով նրանց ընկերութեան պատուաւոր անդամներ։

Ժողովականներն ընդունում են այս առաջարկը բուռն ծափահարութեամբ և ընտրում են պատուաւոր պատգամաւորներ՝ պ. պ. բժշ. Բ. Նաւասարդեանին Ս. Յարութիւնեանին, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսեանին և Խորհրդի անդամ տիկ. Հ. Առստամեանին ժողովից յետոյ ներկայանալ Փոխարքային և նրա ամուսնուն մատուցանելու պատուաւոր անդամութեան վկայագիրները։

Երգեցիկ խումբը երգում է «Գարուն»-ը։

Ընդհանուր ժողովի հարցերը վերջացած լինելով, սկսւում է երեսնամեայ յօբելեանի առթիւ ստացուած գրութիւնների, հեռագրերի և ներկայ եղողների շնորհաւորութիւնները։ Առաջինը կարդացւում է Կաթողիկոսական Տեղապահ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանի օրհնութիւնը, որ լսւում է նախագահի առաջարկութեամբ յոտնկայս։

Ապա շնորհաւորում է մի ճառով Սեբաստիոյ առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսը, որ շեշտում է բարեգործութեան հիմք ծառայող կազմակերպուած սիրոյ մասին, նա ասում է, որ բարեգործութեան հէնց գաղափարը սէր է, առանց որի ոչ մի բան չի կարող յարատև լինել և երջանիկ են այն ազգերը, որոնք զգում են իրենց մերձաւորի դժբախտութիւնը, սիրոյ ձեռք են կարկառում նրան և հայը, որ շարունակ մատնուած է եղել զրկանքների, անշուշտ չէր կարող զգալ այդ, որին ապացոյց, ահա այս ընկերութիւնն է, որ երեսուն տարի ձեռք է մեկնում ամեն մի անհատի, երբ նա թշուառութեան մէջ է գտնւում։ Թորգոմ սրբազանը ցանկութիւն է յայտնում, որ ապագայում ևս այդ ընկերութիւնը ընթանայ իւր ծրագրած ուղիով, օգնելով հասարակութեանը աւելի ևս լայն ձևով։

Նախագահը յայտնում է, որ ընկերութեան հիմնուելու օրերին մեծ աջակցութիւն ցոյց տուած դրամատուրգ պ. Գ. Սունդուկեանը յայտնել է, որ հիւանդութեան պատճառաւ անկարող լինելով այս հանդիսաւոր նիստին ներկայ գտնուել, ուղարկել է իւր շնորհաւորութիւնները։

Ապա քաղաքագլուխ Ա. Խատիսեանը ռուսերէն լեզուով շնոր-

հաւորեց ընկերութեան 30-ամեակը, որի բազմաթիւ ճիւղերը ցրուած են Կովկասի զանազան անկիւններում իբրև մի-մի կանթեղ, այնպէս, ինչպէս աստղերը երկնքում և վերջացրեց իւր խօսքը բարեմաղթութեամբ, որ հայ ազգը չզլանայ իւր լուման տալ այս կուլտուրական մեծ գործօնին, որով կխրախուսի նրա գործիչներին այսուհետև աւելի եռանդով նուիրուելու ընկերութեան գործունէութեանը։

Թրքահայ պատգամաւոր պ. Թէքէեան խօսեց Եգիպտոսի «Ընդհանուր Միութեան» անունից, նա ցոյց է տալիս մի շարք ընդհանուր պատճառներ, որոնք ծնել են այդ երկու ընկերութիւններին, ապա իրենց նպատակները, որ շատ քիչ են զանազանւում և ցանկութիւն է յայտնում երկուսին ևս առատ միջոցներ իրագործելու իրեն ծրագրած բոլոր նպատակները։

Այնուհետև խօսում են ներկայ եղող պատգամաւորներ՝ Պօլսի Միացեալ Ընկերութեան կողմից պ. Հ. Առաքելեան և Ա. Սարուխանեան։

Բագուի կուլտուրական Միութիւնից — բժ. Մանդինեան Թիֆլ. Հայուհեաց Բարեգ. Ընկ. — տ. Ե. Յարութիւնեան, Ջրի և էժանագին ճաշարանից — տ. Իստամանեան. Ներսիսեան դպր. Հոգաբարձութիւնից — պ. Ն. Կաճկաճեան Բագուի Հայոց Մարդասիրական Ընկ. — պ. Պապաջանեան, Ներսիսեան դպր. Մանկավարժական խմբից — պ. Իս. Յարութիւնեան, Վրաց Գրագիտական ընկերութեան ուղարկած վրացերէն ուղերձը կարդում է պ. Ջ. Մամուլեան։ Թիֆլ. վարժուհիների ընկ. — տ. Սատրօսէլսկայեա — ռուսերէն, Բագուի կանանց Աշխատանքի տնից — տ. Ադամեան, Յովնանեան օր. դպ. Հոգաբարձութիւնից — պ. Հ. Առաքելեան, Ս. Մելքումեան, նոյն դպրոցի մանկավարժական խմբից — պ. Ս. Մալխասեան, Թիֆլիսի Գայիանեան դպրոցից — պ. Ս. Աբովեան, Թիֆլիսի Հայոց Դրամատիքական Ընկ. — պ. Տ. Յովհաննիսեան, Բագուի ծխ. դպրոց. Հոգաբարձ. — պ. Տ. Բէգզադեան և բժ. Սադեան, Թիֆլ. Հրատարակչակ. Ընկ. — բժ. Ա. Ջարգարեան, «Մշակի» խմբագրութեան և գիւղատնտ. ու Տնայնագործ. ընկ. կողմից — պ. Ա. Քալանթար և ընկ. վարչ. անդամ տ. Դօլուխանեան, Թիֆլ. Հայոց Ազգագրական Ընկ. — պ. Գ. Մէլիք-Ղարագեօզեան, Թիֆլ. Հայ. Որբախնամ ընկ. — տ. Ն. Ալիբէկեան, Թիֆլ. հայերի մէջ Օգտակար Գիտելիքներ տարածող ընկ. — պ. Յ. Ալիխանեան, «Աղբիւր-Տարազի» խմբագր. — պ. Տ. Նազարեան, «Հորիզոն»

թերթի խմբ.—պ. Վ. Վալադեան, «Հասկերի» խմբագր.—տիկ. Կատ. Լիսիցեան, Կովկ. Հայոց Ուսուցիչների և Վարժուհիների Միութեան և «Նոր-դպրոց» ամսաթ.—պ. Գր. Վարդանեան։ Երևանի օգտակար գիտելիքներ տարածող ընկ.—բժ. Տէր-Միքայէլեան։ Թիֆլիսի «Լոյս» ընկերութիւնից—պ. Ա. Աւագեան։ «Սուրհանդակ» և «Խաթաբալա»-ի խմբագր.—պ. Ա. Երիցեան, Թիֆլիսի հայ դերասանների—պ. Ամիրէնեան։ Թիֆլ. Առևտր. գիտելիքներ տարած. ընկ.—պ. Տէր-Ստեփանեան։

Ապա պ. Մ. Ջմշկեանը արտասանեց Թիֆլիսի բարբառով իր յօրինած ոտանաւորը և պ. Յ. Մալխասեան շնորհաւորեց իր կողմից։

Ժամանակի ուշ լինելու պատճառաւ, նախագահը առաջարկեց, որ ներկայ եղողները այլ ևս չարտասանեն ճառեր, այլ բաւականանան յայտնելով, թէ ում կողմից են եկած պատգամաւոր, որ և ընդունւում է ժողովի կողմից։

Բացի վերոյիշեալներից ներկայ էին Ընկ. ճիւղերից և զանազան հաստատութիւններից և ընկերութիւններից հետևեալ ներկայացուցիչները՝

Ընկ. Լագօդաղի ճիւղի կողմից—Բաղրատ քահանայ Սուքիասեանը և պ. Մինաս Նարինեանը, Հին Ղրիմից—ներկայացուցիչ պ. Յարութիւն Թումանեանը, Վլադիկավկազի ճիւղի կողմից—պ. Սա. Լիսիցեանը, Գորիսի ճիւղի կողմից—պ. Մարգար Աւետիսեանը. Հին Նախիջևանի ճիւղի կողմից—պ. Ս. Թորոսեանը, Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի կողմից—պ.պ. Աւետեան և Երուանդ Վրդանէսեանը, Ղափանի ճիւղի կողմից—պ. պ. Սմբատ-բէկ Մէլքիսեդեկեան և Սողոմոն-բէկ Փարսադանեանը, Երևանի ճիւղի կողմից—պ.պ. ինժ. Վ. Միրզոյեանը և բժ. Զ. Անդրէասեանը, Դուշէթի ճիւղիւղի կողմից—Յուսիկ քահանայ Ապրըլեանը, Սուրամի ճիւղի կողմից—պ. Յով. Դաւթեանը, Ախալցխայից—Աբրահամ քահանայ Ղազազեանը, Գօրուայ գաւառի Ախալքալակ գիւղի դպրոցի հոգաբարձութեան կողմից—Յարութիւն քահանայ Միրիմանեանը, Քարվանսարայի ճիւղի կողմից—Մեսրոպ քահ. Էգիլեանը, որը և կարդաց ճիւղի վարչ. կողմից ուղերձ։ Ախալքալակի ճիւղի կողմից—պ.պ. Գ. Դալբինեանը և Մ. Մաղաքեանը, Կարսի ճիւղի կողմից—պ. բժ. Ա. Հայրապետեանը, Նովօրոսսիյսկի ճիւղի կողմից—լիազօր իշխանուհի Մարիամ Թումանեանը, Ջխարի ճիւղի կողմից Արտաշէս քահ. Գափամաճեանը, որը և շնորհաւորեց ճիւղի կողմից Ընկ.

30-ամեակը, Բաքւայ Հայոց Կուլտուրական Միութեան կողմից—պ. բժ. Մանդինեանը, Թիֆլ. Հայուհեաց Բարեգ. Ընկ. Վարչութեան կողմից—տիկ. տիկ. Մ. Խատիսեանը, Ղամբարեանը և Կուզանեանը, Ախալցխայի ճիւղի կողմից—պ. Գէորգ Արաբեանցը, Երևանում հայերի մէջ օգտակար գիտելիքներ տարածող Ընկ. Վարչութեան կողմից—պ. բժ. Տէր-Միքայէլեանը, որը շնորհաւորեց Վարչ. կողմից Ընկ. 30-ամեակը։ Ներկայ էին յօբելեանական հանդէսին նաև տեղացիներից և թէ գաւառից բազմաթիւ հանդիսականներ։

Ապա Խորհրդի փոխ-անդամ պ. Կ. Շիրինեանը, համաձայն Խորհրդի որոշման, կարդում է բարձրաստիճան հոգևորականներից ստացուած նամակները և հեռագրները, այն է՝ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանից, Սուքիաս արքեպ. Պարզեանից, Մեսրոպ Եպիսկոպոս Մովսիսեանից, Կարապետ Եպ. Տէր-Մկրտչեանից, Ճեմարանի Մանկավարժական խմբի կողմից՝ տեսուչ Բագրատ վարդապետից, Թիֆլիսի կուսանոց Մայրապետ Հռիփսիմէ Թայիրեանից և յետոյ ստացած բոլոր հեռագրները, յիշելով որտեղից և ումից. այսինքն՝ Թիֆլիս-վրաց Ազնուականների գիմնազիայի տեսուչ Մգլիմանիայից, Թելաւի ճիւղի ներկայացուցիչ պ. Նիկ. Մարգարեանից, Արմաւիրից—ուսուցչական խմբից, Ղզլարից—Ղզլարի Հայուհեայց ընկ. վարչութիւնից, Նուխուց—Հոգաբարձական և Մանկավարժական խորհրդից, Շրվենանց գիւղից—Հոգաբարձութեան և Մանկավարժ. խմբերի կողմից Տէր-Մարգարեանից, Ախալքալակից—Հոգաբարձական և Մանկավարժական խմբերից, Ղզլարից—ծխական դպրոցի հոգաբարձութիւնից, Պետրովսկից—Հոգաբարձական և Մանկավարժական խորհրդից, Ղզլարից—դպրոց.—ուսուցչակ. փօնդի մասնաժողովից, Երևանից—Բազարաճիւղ, Կարբի, Ղարաքիլիսա, Սադլու, Տամչլու և Հաննավանքի գիւղերի ուսուցիչ-վարժուհիներից, Ալեքսանդրապոլից—Ս. Փրկիչ դպրոցի Հոգաբարձ.—Մանկավարժական խմբից, Գորիսից—Հոգաբարձ. և Մանկավարժական խմբից, Կոլինապատից—Հոգաբարձական և Մանկավարժական կազմից, Վերին-Ագուլիսից-Հոգաբարձական և Մանկավարժ. խմբից, Աստրախանից—Գէորգ քահանայ Մկրտումեանից, Բագուից—Տիկ. Հեղինէ Մէլիք-Հայկազեան-Բէկզադեանից, Աստրախանից-Սեդրակ ք. Աղաբալեանից, Շուշուց Գրիգոր Տէր-Պօղոսեանից, Ռոստովից—Հայոց Բարեգործ. «Իգմիրլեան» Ընկ. Խորհրդից և Հայուհեաց աղքատա-

խնամ ընկերութիւնից, Նոր-Նախիջևանից—Թեմական դպրոցի Հո-
գաբարձական և ուսուցչական խմբից, Ս.-Պետերբուրգից—Հայկական
գաղութից, Շուշուց—Որբանոցի Հոգաբարձութիւնից, Ասխաբադից
—Հայոց Բարեգ. Ընկ. Վարչութիւնից, Մոսկվայից—Հայոց Եկե-
ղեցական Խորհրդից, Արմաւիրից—մի խումբ հայերից, Բաքուից—
Վրաց ազնուականների պարագլուխ իշխ. Թումանովից, Թեհրանից
ազգային Խորհրդից, Ս.-Պետերբուրգից—Եկեղեցական Խորհրդից, Բա-
թումից—Հայոց եկեղեցիների Հոգաբարձութիւնից, Մայկոպից-
դպրոցի Հոգաբարձ. և Մանկավարժ. խմբից, Ղզլարից—Հասարա-
կական գրադարանի վարչութիւնից, Բաքուից—ծխական դպրոց-
ների ուսուցիչներից, Շուշուց—Գործագործական ուսումնարան-ար-
հեստանոցի վարչութ., Ս.-Պետերբուրգից—Դումայի անդամ Յ. Սա-
ղաթէլեանից, Եղէսեայից—Հոգաբարձական և ուսուցչական կազմերից,
Բաքուից—Արամ Առաքէլեանից, Ղարասուբազարից Բարեգործակ.
Ընկ. Վարչութիւնից Ս.-Պետրովսկից—Արշէն ք. Մարգարեանից, Ղու-
բայից—մի խումբ երիտասարդներից, Սուխումից—Հոգաբարձական
և մանկավարժական խմբից, Ս.-Պետերբուրգից—բժ. Բուդաղեանից,
Աստրախանից Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչու-
թիւնից, Մէլիտոպոլից—տեղական հայերի կողմից Վ. ք. Մա-
միկոնեանից, Սուխումից—գործակալ Եղիշէ քահանայ Տէր-Եղիա-
զարեանից, Սիմֆերոպոլից—Աղքատախնամ Ընկերութեան և դպ-
րոցի Հոգաբարձութիւններից, Մօզդօկից-ուսուցիչներից, Շու-
շուց—Ջաւէն վարդապետից, Թելաւից—Մանկավարժական Խոր-
հրդից, Երևանից—Թեմական դպրոցի Մանկավարժական կազմից,
Սուխումից—Թեմական տեսուչ Յ. Տէր-Միրաքեանից, Նոր-Նախի-
ջևանից—Ս. Հռիփսիմեան դպրոցի Մանկավարժական կազմից և
ծխական դպրոցի Հոգաբարձութիւնից, Բաքուից—Գալստեանից,
Աստրախանից Հայոց Ընկերութիւնից, Երևանից—Զանգիբասարի
հայ հասարակութիւնից, նաև Բաթումի, Նովորոսիյսկի, Ղազախի,
Պետրովսկի, Սղնախի, Գանձակի, Եկատերինոդարի, Ջալալ-Օղլու,
Գորււայ, Գորիսի, Ալէքսանդրապոլի, Շուշւայ, Վաղարշապատի,
Ջիարի, Ախալքալաքի, Նուխւայ. Արդահանի, Ղափանի, Յարսկիէ
Կոլոդցի, Կաղզուանի, Արմաւիրի, Ղուբայի, Արդւինի, Մօզդօկի
ընկերութեանս ճիւղերի Վարչութիւններից և Ղզլարից։

Ապա Խորհրդի նախագահ պ. Ս. Յարութիւնեան, շնորհակա-
լութիւն յայտնելով բոլոր ներկայ եղողներին և հեռագիրներով մաս-

նակցողներին, յայտնեց, որ այսօր կատարւում է հասարակական
տօն, որը կարելի է անուանել գեղեցիկ զգացմունքների և լուսա-
ւոր մտքերի տօն, օգնել թշուառին, հիւանդին, կարօտեալին և
օգնել ոչ թէ միայն նիւթապէս այլ և բարոյապէս, բարձրացնելով
և զարգացնելով նրա մտաւոր կարողութիւնը. ահա այն գաղափարը,
որը Բարեգործական Ընկերութեան հիմնաքարն է կազմում։ Թէ
որքան յարգւած է այս ընկերութիւնը, դրան լաւ ապացոյց կարող
է լինել այն բուռն համակրութիւնը, որ նա ցոյց տուեց ընկերու-
թեանս յօբէլեանի առթիւ կազմուելիք դպրոցական—ուսուցչական
ֆոնդի վերաբերմամբ։ Կարճ ժամանակում ֆոնդի գումարը հասաւ
մի քանի տասնեակ հազարների, որով և ցոյց տրուեց, որ հասարա-
կութիւնը, առանց խաւերի խտրութեան, մեծ հաւատ ունի դէպի
Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը։ Այսպիսի ջերմ
մասնակցութիւնը անձամբ, պատգամաւորութեամբ, հեռագրներով և
ուղերձներով պէտք է մեծ խրախուսանք հանդիսանայ ընկերու-
թեան գործիչների համար, որոնք աւելի մեծ եռանդով պէտք է
աշխատեն ընկերութեան բարգաւաճման համար։ Կրկին յայտնելով
բոլոր շնորհաւորողներին շնորհակալութիւն, նախագահը մաղթում
է կեանք հայ ժողովրդին, որ նա գնահատում է և նպաստում ըն-
կերութեանս, իսկ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը
անխոնջ աշխատանք, որ կարողանայ արդարացնել իր վրայ դրած
ժողովուրդի յոյսերը։

Բժշկապետ Նաւասարդեանը իբր ընդհանուր ժողովի նախագահ
շնորհակալութիւն է յայտնում ժողովականներին, Թիքահայ պատ-
գամաւորներին և ընկերութեան Խորհրդին, ցանկութիւն յայտնե-
լով, որ ներկայ եղող Թիւրքիոյ Հայոց պատրիարքական ներկայա-
ցուցիչը իր կողմից օրհնի ընկերութեան ձեռնարկութիւնները։

Յակոբն Աշոտ Եպիսկոպոսը մի քանի խօսքով դրուատում է
ընկերութիւնը, ցանկանում է գործիչներին եռանդ և ույժ, ընկե-
րութեանը յարատևութիւն և ապա աղօթում է «Հայր մեր»-ով ու
«պահպանիչ»-ով։

Նախագահը ժողովը համարում է փակուած։

Խումբը երգում է և հասարակութիւնը ցրւում ցերեկուայ 3 և
կէս ժամին։

Նախագահ Յօբելեանական ժողովի՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Քարտուղար՝ Յ. Տահնազարեան

ՑԱՆԿ

Երես

1) Կ. Հ. Բ. Ընկ. Խորհրդի կազմը և նրա գործունէու-
թիւնը 1911 թւին 1
2) Ճաշարան 10
3) Որբանոց 13
4) Գրադարան-ընթերցարան 15
5) Կ. Հ. Բ. Ընկ. 1911/12 ուսումն. տարւայ դպրոցական
գործունէութիւնը 19
6) Ցուցակ 1911 թւին ստացւած նւէրների 31
7) Ընկերութեան ճիւղերը 34
8) Ցուցակ Կ. Հ. Բ. Ընկ. հիմնարկութիւնների 114
9) Ցուցակ Կ. Հ. Բ. Ընկ. Կենտրոնի 1911 թ. անդամների. 115
10) Կենտրոնի 1911 թ. հաշիւները 123
11 Համառօտ ընդհանուր հաշիւ մուտքի և ելքի Կենտրոնի
և ճիւղերի 148
12) Վերստուգիչ Յանձնաժողովի արձանագրութիւնը . . 150
13) Խորհրդի բացատրութիւնը Վերստուգիչ Յանձնաժո-
ղովի նկատողութիւնների 153
14) Ցուցակ Կենտրոնի արժէթղթերի 157
15) Ցուցակ ճիւղերից ստացւած անձեռնմխելի և պահես-
տի գումարների 160

16) Յաւելւած.—Ընդհանուր ժողովի արձանագրութիւնները

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Տող	Տպւած է	Պէտք է լինի
17 ներքև	2	ձեռնհաո	ձեռնհաս
23 վերև	1	նպսստել	նպաստել
25 »	4	եիկդասեան	երկդասեան
29 »	2	1901/12	1911/12
58 ներքև	15	ուտք	Մուտք
96 »	5	իքայել	Միքայել
97 վերև	3	հանկանակութիւն	հանգանակութիւն
109 ներքև	6	50 ր. 73	50 ր. 83
Յաւելւածի մէջ			
16 ներքև	11	զգալ	չզգալ

ՀՀ Ազգային գրադարան
NL0240698